Azg Ազգ

2 ՆՈՅԵՄԲԵՐ 2005 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 198 (3364)

Մինսկի խումբը կներկայացնի ղարաբաղյան խնդրի լուծման նոր առաջարկներ

ԲԱՔՈՒ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 24-ին եւ 25-ին Վաշինգտոնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովը (Ռուսաստան), Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա) եւ Սթիվեն Մանը (ԱՄՆ) քննարկել են ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման մի քանի առաջարկներ, որոնք կառաջարկվեն Ադրբեջանին եւ Հայաստանին,- հայտարարել է Յուրի Մերզլյակովը: Նա հայտնել է, որ այդ առաջարկները համաձայնեցված են համանախագահների միջեւ: ԵԱՀԿ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների տարեկան նիստում, որ կկայանա դեկտեմբերի 4-5-ը Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայում, համանախագահները առանձին հանդիպումներ կունենան Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների հետ եւ նրանց կներկայացնեն այդ առաջարկները: «Կկայանա՞ արդյոք նախարարների հանդիպում Լյուբլյանայում՝ դեռ հայտնի չէ: Դա կախված կլինի մեր բանակցությունների արդյունքներից, որ մենք կվարենք նրանց հետ առանձին-առանձին», ավելացրել է ռուս դիվանագետը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ-15

Ամենաերկար ճանապարհը սկսվում է առաջին քայլից

Անկախության վերահաստատումից ի վեր մեր խորհրդարանն անցել է դժվարին մի ճանապարհ: 15-ամյա խորհրդարանը երեկ իր տոնը նշում էր խորհրդարանի նիստերի դահլիճում գումարելով միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էին 30 երկրներից ժամանած 80-ից ավելի պատվիրակություններ, պատգամավորներ, միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ: Ելույթներից եւ քննարկումներից հետո կայացավ նաեւ պատգամավորական բարեկամության հայկական վեհաժողովի (ՊԲՀՎ) նախագահության նիստը: Որոշվեց, որ 2006 թ. հունիսի 28-30-ը Երեւանում կկայանա հաջորդ լիագումար նիստը:

Տոնակատարության հիմնական մասը տեղի ունեցավ օպերայի ու բալետի պետական թատրոնի շենքում: Կառավարական հանդիսության առաջին մասը բացվեց ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի ողջույնի խոսքով, հնչեցին գնահատականի խոսքեր բոլոր գումարումների պատգամավորներին հասցեին: «Իսկ անցած 15 տարին, ինչպես նշեց Արթուր Բաղդասարյանը, կարճ ժամանակ է պետական համակարգերի ստեղծման ու ձեւավորման համար... մարդկանց մտածողության ու հոգեբանության մեջ փոփոխություններ առաջացնելու համար: Ամենաերկար ճանապարհն էլ սկսվում է առաջին քայլից, բայց անգամ այն մեզանով չի ավարտվում»:

Հանդիսավոր նիստին մասնակցում էին ու ողջույնի ուղերձներ հղեցին երկու տասնյակից ավելի երկրների ղեկավարներ եւ միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ: Նիստին մասնակցում էին բոլոր գումարումների պատգամավորները: Ներկա էին Ն.Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Անկախ Հայաստանի խորհրդարանի 15-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի երկրորդ մասում ելույթ ունեցան հանրաճանաչության լավագույն կոլեկտիվներ, երգիչներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

Հայաստանը չի՞ ճանաչում Կարսի պայմանագիրը

Թե՞ պայմանագրի չճանաչման մեղադրանքը նպատակամղված քաղաքական առաջադրանք է Թուրքիայի համար

Հայտնի թուրք հրատարակիչ, իրավապաշտպան Ռագըփ Զարաֆոլուն «Ուլֆեդե օզգյուր գյունդեմ» թերթի հոկտեմբերի 26-ի համարում «Լոզանի նախօրյակին ստորագրված առաջին միջազգային պայմանագիրն ու սահմանային վեճեր» վերնագիրը կրող ծավալուն հոդվածով անդրադարձել էր հայ-թուրքական հարաբերություններին: Հոկտեմբերի 29-ին նրա հոդվածի մասին տեղեկացրեց «Ազգը», ընդգծելով, որ հեղինակի ուշագրավ հարցադրումները համադրվում են կարեւոր հեռանկարների հետ, որոնցից թերեւս կարելի է առանձնացնել 1921 թ. Կարսի պայմանագրի խախտմանը վերաբերող հեռանկարը: Նա հիմք ընդունելով, որ խախտումը Ադրբեջանի հետ կատարում է Թուրքիան, հարց է բարձրացնում. «Ո՞ւմ է խախտումները Հայաստանին վերագրելու նպատակը»:

Ռագըփ Զարաֆոլուն հայ հասարակությանը քաջ հայտնի գործիչ է: Ինչ վերաբերում է նրա հոդվածին, ապա դա պայմանական վերնագրով ներկայացնում ենք ձեր ուշադրությանը՝ առանց կրճատումների:

Ռ. Ղ.

Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունները տարիներ շարունակ ընթացել են ԽՍՀՄ-ի հովանու ներքո: Մինչդեռ Հայաստանի խորհրդայնացման նախօրյակին երկու երկրների միջեւ 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրվել էր Գյումրու (Ալեքսանդրապոլ) պայմանագիրը: 1921 թ. հոկտեմբերի 13-ին խորհրդային Հայաստանի հետ ստորագրված Կարսի պայմանագրով դա չեղյալ հայտարարվեց: Մինչ Թուրքիան պահանջում է, որ Հայաստանը պարզորոշ հայտարարի այս պայմանագիրը ճանաչելու մասին, Հայաստանը նշում է, որ խորհրդային շրջանում ստորագրված բոլոր պայմանագրերն ուժի մեջ են, որոնց թվում է նաեւ Կարսի պայմանագիրը: Տվյալ դեպքում խնդրո առարկան Կարսի պայմանագրի շուրջն առկա խառնաշփոթությունն է, թե՞ դրանով փորձ է արվում քողարկել հեռագնա նպատակները: Ինչո՞ւ է վիճարկման ենթարկվում նախքան Լոզանը Թուրքիայի ստորագրած կարեւոր առաջին պայմանագիրը: Ինչո՞վ է պայմանավորված դա:

Տես էջ 4

Արա Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը Կուբայում

ՀԱՎԱՆԱ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 42 երկրների ավելի քան 1,8 հազար ֆիրմաներ են մասնակցում նախօրյակին Կուբայում բացված Հավանայի 23-րդ միջազգային տոնավաճառին: Ինչպես բացման արարողությանը նշել է կազմկոմիտեի նախագահ Աբրահամ Մասիկեսը, առեւտրաարդյունաբերական համաժողովին օտարերկրյա ընկերությունների լայն մասնակցությունը վկայում է կուբայական շուկայի նկատմամբ արտասահմանյան ներդնողների վստահության մասին:

Տոնավաճառին մասնակցելու համար Հավանա է ժամանել Ռուսաստանի ներկայացուցչական պատվիրակությունը, որը գլխավորում է Ռուսաստան-Կուբա գործարար խորհրդի համանախագահ Արա Աբրահամյանը: ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում նա հայտնել է, որ միջազգային տոնավաճառին մասնակցում են քսանից ավելի ֆիրմաներ ներկայացնող ռուսաստանցի ձեռնարկիչներ:

Ադրբեջանում ազատ եւ արդար ընտրությունների պայմաններ չկան

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանում ստեղծված ներքաղաքական կացության առթիվ հատուկ հայտարարությամբ այսօր Նյու Յորքում հանդես է եկել Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը: Որպես նախընտրական իրավիճակի վերաբերյալ 30-էջանոց զեկույցի հավելում հայտարարության մեջ նշվում է. «Ադրբեջանում ազատ եւ արդար ընտրությունների անցկացման պայմաններ գոյություն չունեն: Վտանգ կա, որ Ադրբեջանում ընտրակեղծիքների արդեն արձանագրված նախադեպը կարող է կրկնվել»: Հայտարարության հեղինակները նշում են, որ իշխանությունները ահաբեկում են ընդդիմադիր թեկնածուներին եւ ընդդիմադիր կուսակցությունների աջակիցներին: Կազմակերպության ներկայացուցիչները նաեւ չեն բացառում, որ իրադարձությունների նման զարգացման պայմաններում կարող է կրկնվել 2003-ի աշնան իրավիճակը, երբ նախագահական ընտրություններից հետո ընդհարումներ տեղի ունեցան ընդդիմության կողմնակիցների եւ իրավապահների միջեւ:

Ներկայիս վարձու աշխատողները կորուստն իրենց ապագա կենսաթոշակի չափը

Ինչ կտա անհատական հաշվառման համակարգի ներդրումը

ԱԲԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անհատական հաշվառման համակարգի ներդրման կապակցությամբ սոցիալական ապահովագրության հիմնադրամը երեկ խոշոր ձեռնարկությունների ներկայացուցիչների համար հանդիպում էր կազմակերպել, որի նպատակն էր պարզաբանել նոր համակարգի գործունեության ժամանակ առաջ եկող խնդիրները: Անհատական հաշվառման համակարգի մանրամասները ներկայացնելով, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահ Վազգեն Խաչիկյանը հայտնեց, որ համակարգը սկզբունքորեն նոր հարաբերություններ է ձեւավորում քաղաքացիների, սոցհիմնադրամի եւ ձեռնարկատերերի միջեւ: Այս դեպքում անհատը շահագրգռված է բարձր եկամուտներ ցույց տալ, քանի որ դրանով է պայմանավորված իր կենսաթոշակի հետագա չափը: Տեղեկացվեց, որ այս համակարգը որպես փորձնական ծրագիր արդեն ներդրվել է Երեւանի երկու տարածքային կենտրոններում, ապա ամբողջ քաղաքում:

Գործատուները պետք է հիմնադրամի տարածքային կենտրոններում իրենց աշխատակիցների համար բացեն անհատական հաշիվներ, ապա տեղեկացնեն հիմնադրամին յուրաքանչյուր աշխատողի համար կատարված սոցիալական վճարի չափը: Անհատական հաշիվ բացելու վերաբերյալ հայտերը, համաձայն կառավարության որոշման, գործատուները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եւ ֆիզիկական անձինք սոցհիմնադրամի տարածքային ստորաբաժանումներ պետք է ներկայացնեն մինչեւ 2005 թ. նոյեմբերի 15-ը կամ աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում, իսկ 2004 թ.-ի տարեկան հաշվետվությունները՝ մինչեւ 2005 թ. դեկտեմբերի 30-ը:

Տես էջ 2

Ամիրյան 4/16 հուշարձան շենքը քանդողները կբախվեն սոցիալական շարժման հետ

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Աբովյան, Բուզանդի, Արամի փողոցների պատմամշակութային շենքերը քանդող փողաշերները հասել են Ամիրյան 4/16 շենքին, որի վրա ելս փակցված է «Պահպանվում է պետության կողմից» ցուցանակը: Ու քանի որ պետությունն ու իշխանությունը տարբեր հասկացություններ են, ու մեզանում վերջինիս շահույթ ակնկալող գործունեությունը ոչ միշտ է բխում առաջինի շահերից, ուրեմն բնական էր, որ 18-րդ դարի հուշարձան շենքերը պիտի դուրս մնային պետական խնամքից ու հայտնվեին դրանց տարածքը գնած փողաշերների բուլդոզերների տակ: Քաղաքի ներկայիս գլխավոր ճարտարապետը տարբեր առիթներով հայտարարում է, թե քանդված շենքերը կհավաքվեն «Սիլ պլազայի» հետնամասում, ինչին էլ մեր հավատում, իսկ նախկին գլխավոր ճարտարապետն այդ ծրագիրը համարում է ճակատագրական սխալ ու գերեզմանոցային մոտեցում, ինչն ավելի մոտ է իրականությանը: Արդեն իսկ տեսանելի է դառնում քանդված հուշարձան շենքերը նրանց մտահղացումով պատմության գրկում վերջնականապես թաղելու հեռանկարը: Ամենազավեշտալին այն է, որ նրանցից ոչ մեկը չի խոսում բոլորիս հետաքրքրող այն հարցի մասին, թե ովքե՞ր են պատմամշակութային շենքերի նոր ցուցակը կազմողները եւ ի՞նչ տրամաբանությամբ ու չափանիշներով ցուցակից դուրս մնացին խորհրդային տարիներից հիշյալ ցուցանակը կրող շենքերը:

Տես էջ 3

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՊՈՂՈՑ

Պասվական հայրիկն ու սահմանադրությունը

Տիգրան Մեծի պողոտայում ամեն օր մի կույր ծերունի համանչա է նվագում: Մեղեդին գալիս է ներսից՝ դրսի աշխարհը նա չի տեսնում: Նվագում է մեր հին աշուղական մեղեդիները, ոչ շատ վարպետորեն, բայց որ սիրտ է դնում մեջը՝ զգացվում է: Առաջ էլ նրան նկատել էի, բայց առնին վագի մեջ հաճախ էի անցնում՝ ուշադրություն չդարձնելով: Մի օր ուշ երեկոյան տեսա, թե ինչպես է նա մի երկար ձիպոտով ոտի առջեւ սուլելով՝ փորձում երթուղային կանգնեցնել, անգամ թվաց, թե մեքենան ուր որ է կխփի. օգնեցի՝ նստեց, բայց մինչ այդ մի խան որպե զրուցեցինք: Ու երբ անցնում եմ նրա կողով՝ բարձրաձայն ողջունում եմ, իսկ նա էլ առույգ պատասխանում է:

Կույր համանչահարը 76-ամյա Պասվական հայրիկն է: Ամեն օր Կոմիտասի փողոցից նա նստում է թիվ 9 տրոլեյբուսը, իջնում է մանկավարժական ինստիտուտի մոտ եւ այնտեղից արդեն ճանապարհը մի կերպ գտնելով՝ հասնում է իր «աշխատատեղը», որը Տիգրան Մեծի պողոտայի խանութներից մեկի դիմացի կիսապատն է: Խորհրդային ժամանակի իր թանգարանային նմուշ ճամպրուկից հանում է համանչան, կապվե գոտով ոտին է ամրացնում ինքնաբեռն մի փոքրիկ դրամարկղ եւ մինչեւ երեկո նվագում: Հետո գալիս է աղջիկն ու օգնում է նրան փոխադրական նստել եւ տուն գնալ:

- Ինչու ես գալիս, սիրո՞ւմ են քեզ,- հարցնում եմ:

- Չէ, աղջիկ ջան, ոչ թոշակս չի բավարարում, աղջիկս վարձով ապրում է Կոմիտասի կինոյի մոտ, իրեն օգնում եմ, ես էլ սոված չեմ մնում: Ես միշտ էլ նվագել եմ, մի երբ ամիս «Բարեկամություն» մետրոյի տակ էի նվագում, էնդեղ լավ չէր, մեկն ասում էր՝ վերեւ նստի, մյուսն ասում էր՝ ներքեւ նստի: Էստեղ լավ է, շրջապատի մարդիկ օգնում են: Էդ ինչի՞ ես հարցնում, կարո՞ղ է ինչ-որ բանի աշխատող ես..

Խնդրում եմ պատմել՝ ո՞վ է, որտեղից:

- Ավագ Պետրոսյանի գյուղացի եմ ծնունդով: Տասողությունս 30 տարեկանում եմ կորցրել կոլխոզում աշխատելիս: 9 թոռ ունեմ, 4 զավակ: Երբայ որ դահիճ էր... Նա իր սեփական տղին տվեց գերմանացու ձեռը: Գերմանացին ասաց՝ տղիդ կտամ, մենակ իմ գեներալին տուր, Սալինը չտվեց, էնքան անխիղճ-անաստված մարդ էր. բա մարդ իրա երեխին կթողնի՞ թշնամու ձեռը

- Որ գալիս ես այստեղ, փող աշխատո՞ւմ ես:

- Բա չեմ աշխատո՞ւմ: Ես ոչ մի անգամ պարապ չեմ նստել: Մինչեւ թոշակի գնալս բանվոր եմ աշխատել, հետո էլ ինչ ձեռիցս եկել է՝ արել եմ: Հիմա էլ նվագում եմ: Հենա փող տվեցի՝ տղես գնաց Ուկրաինա, պսակվեց:

- Տեղյա՞կ ես՝ ինչ է կատարվում Հայաստանում, աշխարհում:

- Բա տեղյակ չե՞մ: Ամեն օր մի քանի անգամ հեռուստացույցով լուրեր եմ լսում: Որ ասեմ՝ երեփ նեղանաս, աղջիկ ջան, դու երեփ ժամանակ չունենաս լսելու, բայց ես լսում եմ: Հիմի շատ սահմանադրությունից են խոսում: Էդ լսածովս՝ ժողովրդի մեծ մասը երեփ համաձայն է էդ նորին, այսինքն գիտե՞ս, էն որ ասում են, թե խեղդվողը ձեռը փրփուրին է գցում, հիմի ժողովուրդն է. հույս են կապում, թե սահմանադրության կապակցությամբ կյանքը կլավանա Հայաստանում, քանի որ Եվրոխորհուրդն է դա առաջարկել՝ մեր ժողովրդի մեծ մասը դրա վրա հույս ունի: Բայց ես հույս չունեմ, աղջիկ ջան, էսենց էլ կմնա: Որ ինձ զոռով էլ տանեն հանրաքվե որ ասում են՝ չեմ գնա, գիտեմ որ սուտ ա, սարքովի ա: Իմ ուրախությունն էս նվագելն ա, սրանով եմ ուրախանում, ինչ կուզես նվագեմ:

Ու Պասվական հայրիկը Սայաթ-Նովա է նվագում: Քամանչի վրա էլ փորագրած է՝ «Սայադ-Նովա»: Ընդհատում է նվագելը.

- Էսօր վեց անց կես արի տես՝ թազա կինս ա գալու ինձ տանի, ժիր եմ հա, էդպես մի նայի որ չեմ տեսնում...

Ու շարունակում է նվագել տխուր մեղեդին: Անցնող մի տղամարդ 200 դրամանոց է գցում դրամարկղը: «Խերով ոտ ուներ», նվագելով հետեւից ձայն է տալիս Պասվական հայրիկը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Ճանապարհին շրջված մեքենայի վարորդը մահացել է

Հոկտեմբերի 31-ին ոստիկանության երեքունու բաժին ՊՆ կենտրոնական հոսպիտալից հաղորդվել է, որ աջ ազդրի կոտրվածքով եւ մարմնի տարբեր մասերում ստացած վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել 1986 թ. ծնված Ստեփան Տեր-Վահանյանը, որը գիտակցության չգալով հիվանդանոցում մահացել է: Պարզվել է, որ նույն օրը Ս. Տեր-Վահանյանը վարելով էդուարդ Ա.-ի «ՎԱԶ-2101» մակնիշի ավտոմեքենան, Երեւան-Երասխավան ճանապարհի 28-րդ կմ-ին՝ Տափերական գյուղի մոտ շրջվել է եւ ստացած վնասվածքներով տեղափոխվել հիվանդանոց: Քննությունը վարում է Արարատի դատախազությունը:

Ի գիտություն

ՀՀ ոստիկանությունը տեղեկացնում է, որ ՀՀ-ի տարածքում բնակվող ՀՀ քաղաքացիները, որոնք դեռեւս չեն փոխանակել նախկին ԽՍՀՄ նմուշի անձնագրերը, մինչեւ նոյեմբերի 25-ը ներկայանան իրենց հաշվառման վայրի, իսկ հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության վայրի անձնագրային ծառայություններ, անձնագրերը փոխանակելու համար, ներկայացնելով ԽՍՀՄ նմուշի անձնագիրը: Լուսանկարի, ինչպես նաեւ պետքուրդով սահմանված գումարները կփոխհատուցի ՀՀ կառավարությունը:

Մ. Մ.

Ներկայիս վարձու աշխատողները կորոշեն իրենց աղագա կենսաթոշակի չափը

1-ին էջից

Երեկվա հանդիպման ժամանակ մասնավորապես «Հայռուսգազարդ» ընկերության ներկայացուցչին հետաքրքրում էր, թե ընկերության 17 մասնաճյուղերի աշխատակիցների հայտերը որտեղ պետք է ներկայացվեն: Պատասխանն այն էր, որ դրանք պետք է ներկայացվեն ընկերության գլխամասային ձեռնարկության հասցեով:

Առավել հանգամանորեն լրագրողներին ներկայացնելով անհատական հաշվառման համակարգը, Վազգեն Խաչիկյանը այն կարծիքը հայտնեց, որ սա միակ համակարգն է, որի ժամանակ հաշվառվում են ստացած աշխատավարձի, վճարած սոցվճարի չափերը, եւ ըստ այդմ էլ որոշվում ապագայում ստանալիք թոշակի չափը: Նրա կիրառումը երկու հիմնական նպատակ է հետապնդում: Առաջինը պայմանավորված է ժողովրդագրական վիճակով: Ներկայումս սոցիալական վճարումներ են կատարում 420 հազար վարձու աշխատողներ, իսկ կենսաթոշակային տարիքի անձանց թիվը կազմում է 540 հազար: Այս պայմաններում առաջինները չեն կարող ապահովել երկրորդների կենսաթոշակների համար անհրաժեշտ գումարը: Այս համակարգով ներկայումս աշխատողներն իրենք են իրենց կենսաթոշակների չափը որոշում եւ միջոցներ կուտակում սոցիալական հիմնադրամում:

Այս համակարգի երկրորդ կարեւոր գործոնը պայմանավորված է սոցիալական արդարության հանգամանքով: Բացի այդ, երեւում են նաեւ վարձու աշխատողների իրական եկամուտները, եւ այս համակարգը դառնում է կայուն ու զերծ ցնցումներից: Այդուհանդերձ, Վազգեն Խաչիկյանն ընդունեց, որ այս համակարգի ներդրմամբ գործառուները շահագրգռված չեն, եւ վարձու աշխատողները պետք է պայքարեն, որպեսզի գործատուն ցույց տա նրանց եկամուտների իրական չափը: Քանի որ վարձու աշխատողների համար դա դժվար խնդիր է, ապա նրանք, ըստ հիմնադրամի նախագահի, պետք է պայքարեն իրենց ստեղծած կառույցների՝ արհմիությունների միջոցով: Որքանով կաշխատի այս մեխանիզմը, կերեւա միայն դրա գործելուց հետո, սակայն միանշանակ է, որ Հայաստանի սոցիալական ապահովության համակարգում վաղուց արդեն լուրջ բարեփոխումներ պետք է իրականացվեին:

ՈՒՐՈՒԳՎԱՅԻՑ

«Հայաստանը ես շատ սիրեցի»

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ստեղծման 15-ամյակի կապակցությամբ հրավիրված միջազգային խորհրդաժողովին մասնակցում էին 30 երկրներից խորհրդարանականներ ու միջազգային կազմակերպությունների 80 պատվիրակներ: Հրավիրյալների թվում էր նաեւ Ուրուգվայի Ներկայացուցիչների պալատում, նախաձեռնել է շատ կարեւոր նշանակություն ունեցող փաստաթղթի մշակումը, որն ամբողջությամբ վերաբերում է ցեղասպանությանը եւ որը ստորագրել են 30 հազար մարդիկ, ու ներկայացրել է խորհրդարանին, որպեսզի այդ փաստաթուղթը հիմք հանդիսանա Ուրուգվայի խորհրդարանում ցե-

ղասպանությունը ճանաչելու համար:

Այսօր Ուրուգվայում հայկական համայնքն իր 13 հազար անդամներով ամբողջովին ընդգրկված է երկրի սոցիալ-տնտեսական կյանքի մեջ եւ իր ուրույն տեղն ու դերն ունի: Իսկ Հայաստանն ու Ուրուգվայն, ըստ տկն Քեչիշյանի, շատ նման երկրներ են թե՛ բնակչության քանակով եւ թե՛ այն գործընթացներով, որ իրենք ապրել են ժողովրդավարության ճանապարհին: Առաջիկայում կքննարկեն նաեւ Ուրուգվայի դեսպանի հետ կապված հարցը, որպեսզի Մոսկվայում գործող դեսպանատունը նաեւ Հայաստանն ընդգրկի իր ցանկում: Մտադրությունն փոլում է գտնվում թե՛ տնտեսական եւ թե՛ մշակութային համատեղ ծրագրերի իրականացման մի հատուկ նախագիծ, որը կվավերացնեն երկու խորհրդարանները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՏԱՐՅԱՆ

Արձագանքում է հարկային ծառայությունը

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը այս տարվա առաջին եռամսյակից սկսած հրապարակում է եւ այսուհետեւ շարունակելու է պարբերաբար հրապարակել 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը, որի հիմնական նպատակն է հասարակությունում ապահովել թափանցիկություն եւ հրապարակայնություն: Ուրախալի է, որ վերջին ժամանակներս զանգվածային լրատվության միջոցները շահագրգիռ ձեւով հետաքրքրվում եւ օգտակար վերլուծություններ են կատարում հրապարակված ցանկերի վերաբերյալ:

Գնահատականների որոշ մասերի կարելի է համաձայնել, որոշ մասերի՝ ոչ: Սակայն հարկային պետական ծառայության այս առաջին արձագանքը պայմանավորված է առանձին հրապարակումներում ընթերցողներին մատուցվող ուղղակի ոչ ճիշտ տեղեկություններով: Այսպես, **«Ազգ»** օրաթերթի 2005 թ. նոյեմբերի 1-ի N197(3363) համարում «Խոշոր հարկատուներն այնքան էլ խոշոր չեն» հոդվածում նշվել է, որ «Մի կաթիլ մեղր», «Ռաֆայել-Տաթեւ», «Մուլտի-Լեոն», «Մուլտի-գազ», «Փեթակ» կազմակերպությունները շահութահարկ չեն վճարել: Հարկ է նշել, որ այդ կազմակերպություններն իրենց գործունեության ոլորտից ելնելով (տնամեջառային, ավտոտրանսպորտի գազալիցքավորման, խաղատնային գործունեություն) շահութահարկ վճարողներ չեն: Նշված գործունեության տեսակները օրենքով հարկվում են հատուկ հաշվարկված վճարով, որ փոխարինում է շահութահարկին եւ ավելացված արժեքի հարկին:

Երբեմն անտեսվում է այն հանգամանքը, որ առանձին կազմակերպություններ շահութահարկ չեն վճարել, քանի որ օգտվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված շահութահարկի 100% կամ 50% արտոնությունից:

Հայտնվում է նաեւ, որ ներկայումս ՀՀ կառավարությունում քննարկումների փուլում է նախագիծ, որով նախատեսվում է հետայսու եռամսյակի արդյունքներով հրապարակել տեղեկություններ ինչպես հարկային, այնպես էլ մաքսային վճարումների մասին, որոնք ամբողջական եւ իրական պատկեր կստեղծեն հարկ վճարողների՝ պետական բյուջեի հանդեպ կատարած պարտավորությունների մասին:

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 79 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ /հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ /հեռ 529221
Լրագրողների սենյակ /հեռ 581841
Համակարգչ. ծառայություն /հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն /հեռ 529353
Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Հաստատվեցին գազասպառման ներտնային համակարգի սպասարկման բաժանորդավճարները

Դրանք փոքր-ինչ ցածր են «Հայռուսգազարդի» առաջարկածի համեմատ



Երեկ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստում քննարկվել են գազամատակարարման ոլորտին, ավելի կոնկրետ բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության համար վճար սահմանելու, ինչպես նաեւ բնական գազի հաշվիչ սարքերի փոխարինման, վերանորոգման եւ ստուգաչափման ծախսերի հաշվարկի եւ կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման վճարների հաշվարկման մեթոդիկային համաձայնություն տալու հարցերը:

Համաձայն գազամատակարար կազմակերպության՝ «Հայռուսգազարդի» առաջարկի, ներտնային սպասարկման համար 1 գազօգտագործող սարքավորում ունենալու դեպքում բաժանորդը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, պետք է վճարեր 2800 դրամ, երկու սարքավորում ունենալու դեպքում՝ 6900 դրամ, երեք եւ ավելի սարքավորում ունենալու դեպքում՝ 8500 դրամ: Այս վճարումների դիմաց ընկերությունը պարտավորվում էր իրականացնել գազատարների փականների ստուգման եւ մաքրման, գազի արտահոսքի վերացման, գազի ու գազասարքերի անվտանգ օգտագործման վերահսկման աշխատանքները: Սակայն հանձնաժողովի աշխատակազմը իր կատարած ուսումնասիրությունների արդյունքում այն եզրակացությանն էր հանգել, որ նույն ծառայությունները «Հայռուսգազարդը» կարող է իրականացնել համապատասխանաբար 2400, 5700 եւ 6900 դրամ բաժանորդավճարներով: Դրանց կիրառման արդյունքում, ըստ հանձնաժողովի աշխատակազմի եզրակացության, «Հայռուսգազարդը» տարեկան կունենա մոտ 19 մլն դրամ մաքուր շահույթ: Այդ առաջարկն էլ հանձնաժողովը հաստատեց քվեարկությամբ, որը ուժի մեջ կմտնի դեկտեմբերի 1-ից:

Այս որոշումից սակայն «Հայռուսգազարդի» գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանը դժգոհ էր: Նա նշեց, որ նախկինում այս ոլորտում աշխատում էին 120 կազմակերպություններ, եւ եթե ընկերության համար նախատեսված 18 մլն դրամ շահույթը բաժանվեր նրանց միջեւ, ապա նրանցից ոչ ոք չէր աշխատի շահույթի այդ չափով: Ըստ Կարեն Կարապետյանի, ընկերությունը չի ձգտել այս ոլորտը նույնպես վերցնել իր վրա եւ գնացել է դրան միայն հանձնաժողովի եւ հասարակական կազմակերպությունների ցանկությանն ընդառաջելով: Նա միաժամանակ նշեց, որ մինչ այժմ այդ ոլորտը վատ է սպասարկվել:

Փոխարենը հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանը լավատես էր: Նրա կարծիքով, առաջիկայում գազամատակարարման ոլորտի տեխնիկական սպասարկման որակը կբարձրանա, իսկ սպառողների եւ գազ մատակարարողի նոր հարաբերությունները հնարավորություն կտան բաժանորդին գործ ունենալ միայն մեկ կառույցի հետ: Նախկինում տեխնիկական սպասարկումն իրականացվում էր տարբերյնորեն, տարբեր կազմակերպությունների կողմից, ինչի հետեւանքն էլ բազմաթիվ դժբախտ դեպքերն էին:

Անդրադառնալով այս տարվա նոյեմբերի 1-ից գազասպառման ներտնային սպասարկումը «Հայռուսգազարդի» կողմից իրականացնելուն, ընկերության գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանն էլ նշեց, որ այդ օրվանից ընկերության աշխատակիցներն իրավունք ունեն մուտք գործելու քաղաքացիների բնակարանները եւ տեխնիկական սպասարկման վերաբերյալ պայմանագրեր կնքել: Նա հայտնեց, որ ձմռան նախաշեմին ստուգվելու են բոլոր, այսպես կոչված, ռիսկային բաժանորդները, որոնք օգտագործում են ինքնաշեն սարքեր եւ խախտում անվտանգության կանոնները: Այդ կապակցությամբ նա կոչով դիմեց բնակչությանը՝ ուշադիր լինել ոչ միայն իրենց, այլեւ հարեւանների նկատմամբ եւ անվտանգության կանոնների խախտման դեպքում դիմել համապատասխան մարմիններին:

«Հայռուսգազարդի» գլխավոր տնօրենը երեկ հայտնեց նաեւ, որ ներկայումս գազ ունեցող բաժանորդների թիվը հասել է 310 հազարի, տարեսկզբի 270 հազարի դիմաց: Մինչեւ տարեվերջ ծրագրված է եւս 100 հազարով ավելացնել բաժանորդների թիվը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հարավկովկասյան երկրների ներքաղաքական զարգացումները նոր գրքում

«Հենրիխ Բյոլ» հիմնադրամը եւ լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտը հրատարակել են «Սփյուռք, նավթ եւ վարդեր. Ինչո՞վ են ապրում Հարավային Կովկասի պետությունները» գիրքը, որի ներկայացումը տեղի ունեցավ երեկ: Հոդվածների ժողովածուն Հարավային Կովկասի երկրների ներքաղաքական զարգացումների մասին է, որի հեղինակներն առաջնորդվել են հետեւյալ գլխավոր հարցադրմամբ՝ արդյոք Ադրբեջանում, Վրաստանում եւ Հայաստանում ձեւավորվո՞ւմ են ժողովրդավարական հասարակության հիմքերը, եթե՝ ոչ, ապա ի՞նչ ուղղությամբ են ընթանում զարգացումները:

Մոտ 20 գիտնականներ, լրագրողներ եւ հասարակական գործիչներ են աշխատել հոդվածների ժողովածուի վրա ոչ միայն Հայաստանից, այլեւ Վրաստանից եւ Ադրբեջանից: Օրվա բանախոս Դավիթ Հովհաննիսյանը խոսեց գրքի կարեւորության մասին՝ ժողովածուում առաջադրված հետաքրքրական հարցերի իմաստով՝ ի՞նչ քաղաքական գործընթացներ կան նշված պետություններում, ի՞նչ ուղղությամբ են դրանք ընթանում, ինչպիսի՞ քաղաքական կուսակցություններ կան, ինչպիսի՞ դերակատարմամբ եւ այլն: Բանախոսը հետաքրքրական համարեց գրքի անդրադարձը երկու կարեւոր դարաբաժանների՝ Վրաստանում Շեւարդնաձեի, իսկ Ադրբեջանում Ալիեւի իշխանության ավարտին:

Ուշագրավ է, որ վերնագրի «Սփյուռք, նավթ եւ վարդեր» բառերից յուրաքանչյուրը դիտարկվել է առավել բնորոշ որեւէ պետության համար: «Նոյյան տապան» լրատվական գործակալության վերլուծաբան Հարություն Խաչատրյանը նշեց, որ դրսից նայողին կարող է թվալ, թե Ադրբեջանի ժողովրդավարական գործընթացների զարգացմանը նպաստում է նավթը, Վրաստանին՝ վարդերը (նկատի ունի «վարդյա հեղափոխությունը»), իսկ Հայաստանին՝ սփյուռքը: «Սակայն իրականում դա այնքան էլ ճիշտ չէ, քանզի նշվածները պակաս կարեւոր գործոններ չեն, բայց հաճախ դրանք խոչընդոտում են ժողովրդավարության զարգացմանը», հավելեց նա: Նույն լրատվամիջոցի քաղաքական մեկնաբան Դավիթ Պետրոսյանը նշեց, որ արեւմտյան փորձագետներին ուղղված գիրքն առաջին հրատարակության համար վատ չէ:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հեռախոսային մալուխի գողերը ձերբակալվեցին, իսկ ո՞վ է հատուցելու պատճառած անհանգստության համար

Հոկտեմբերի 6-ից մոտ 12 օր Նոր Նորքի 2-րդ զանգվածի հեռախոսի բաժանորդներս զրկված էինք հեռախոսից: Պարզվեց, որ, ինչպես տեղեկացրեց Նոր Նորքի «Արմենտել» ՀՁ ՓԲԸ մենեջերը, Թետսյան փողոցի սկզբնամասում գտնվող դիտահորից գողացել են 50 մ երկարության հեռախոսային մալուխ: Այսօր արդեն վերը նշված գողությունը կատարելու համար ոստիկանության բաժին բերման են ենթարկվել ու ձերբակալվել 1966 թ. ծնված, նախկինում դատված Բալաբեկ Ա.-ն եւ 1968 թ. ծնված, նախկինում դատված Ռոտոլֆ Մ.-ն: Ոստիկանությունից տեղեկացանք, որ գործի առիթով կատարվում է նախաքննություն, սակայն պարզ չէ, թե ով եւ ինչպես է հատուցելու Նոր Նորքի 4-րդ զանգվածի 1-ին հատվածի մի քանի տասնյակ շենքերի բաժանորդներին պատճառած անհանգստության ու հեռախոսից չօգտվելու համար: Մինչդեռ երբ 1 օր անգամ ուշացնում ես վարձավճարը, հեռախոսն անջատում են, իսկ այս դեպքում ո՞վ է վարձավճարից հանելու չօգտագործված ու չաշխատող օրերի վարձավճարը եւ փոխհատուցելու պատճառած անհանգստության համար ըստ պայմանագրի...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՍՅԱՆ

Ամիրյան 4/16 հուշարձան շենքը քանդողները կբախվեն սոցիալական շարժման հետ

1-ին էջից

Դրանցից են նաեւ Ամիրյան 4/16 եւ 4/18 շենքերը, որոնք Հայաստանի հուշարձանների պահպանության փորձագիտական հանձնաժողովի պահանջով ընդգրկվել են կառավարության հաստատած նորահայտ հուշարձանների ցուցակում, ինչը նշանակում է, որ տարածքը գնած սեփականատերն իրավունք չունի դրանք քանդելու: Բայց... նրա իրավունքը չի սահմանափակվում ցուցակով, այլ վճարած գումարով, եւ նոյեմբերի 8-ին կայանալիք դատական նիստից հետո դատական ակտերի հարկադիր կատարման աշխատողները դարձյալ կգան վտարելու Ամիրյան 4/16 շենքի սեփականատեր Լյուդմիլա Հարությունյանին: Սակայն այս անգամ վտարողների գործն իսկապես բարդ կլինի ու ավելի ծանր Բուզանդի փողոցի բնակիչներին վտարելուց, որովհետեւ Լյուդմիլա Հարությունյանի կողքին կանգնած մարդկանց բանակը բավականին մեծ է՝ մարդու իրավունքների պաշտպանից մինչեւ հասարակ քաղաքացիներ: «Ես պայքարում եմ արդեն 2 տարի, ինձ 2 անգամ այս շենքից վտարել են: Ես մի քանի հարց ունեմ, ո՞վ կարող է օտարել իմ սեփականությունը հայաստանյան օրենքներով: Ոչ ոք: Ո՞վ կարող է ինձ իմ շենքից վտարել: Ոչ ոք: Եվ վերջապես ո՞ւմ ձեռքը կբարձրանա ճարտարապետական այս կոթողը քանդելու: Դե, թող գա ու քանդի: Այս շենքը մերն է, լինի անձնական, թե հասարակական: Այսօրվանից ես այս շենքը դարձնում եմ հասարակական շարժման կենտրոն, որ մենակ չկրեմ այս բեռը», ասաց նա մշակութային իրավունքներին եւ բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության հարցերին նվիրված երեկվա քննարկման ժամանակ, որ տեղի ունեցավ հիշյալ շենքում: Քննարկմանը մասնակցում էր նաեւ Հայաստանի կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար Արամ Ղարաբեկյանը, որը պատրաստակամություն հայտնեց իր կոլեկտիվի հետ տկն Հարությունյանին աջակցելու: Նրա կարծիքով, ներկա փուլում հասարակական շարժումը պետք է ուղղված լինի կամերային երաժշտության տան տարածքի եւ Ամիրյան 4/16 շենքի պահպանմանը, որոնց վերջնական լուծումից հետո միայն հնարավոր կլինի անցնել մյուս հարցերին:

Լյուդմիլա Հարությունյանը քաջատեղյակ է պետական կարիքների անվան տակ բնակիչներին իրենց սեփականության իրավունքից զրկելու բոլոր մեխանիզմներին: Ուշագրավ էր դատավորների խոսքի եւ գործի հակասության մասին նրա պատմությունը: Առանձին զույգերի ժամանակ դատավորները ցույց են տվել, թե ցավում են քանդվող հուշարձան շենքերի համար: Դատական նիստից առաջ մեկը նույնիսկ ասել է՝ «էդ ուտողները էդ շենքն է՞լ են ուզում քանդել, ո՞նց թե», բայց 10 րոպե անց նույն դատավորը վճռման որոշում է կայացրել:

Շենքն ունի յուրահատուկ ճարտարապետական ոճ, երկհարկանի սորգեցնյա նկուղ, որը տանում է դեպի Հանրապետության հրապարակի նկուղները, որ անցած տարի հայտնաբերվեցին ու հետո փակվեցին՝ բարդացնելով հաջորդ սերունդների գործը: Լյուդմիլա Հարությունյանը մտադիր է այն վերածել յուրօրինակ թանգարանի, որը օտարներին պատկերացում կտա 18-րդ դարի Երեւանի մասին:

Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը ակնկալում է, որ հայաստանյան տարբեր կազմակերպությունների ուսումնասիրությունների հիման վրա նմանատիպ դեպքերը հասարակական հնչեղություն կստանան, իսկ առաջիկայում կընդգրկվեն իր տարեկան զեկույցում, մանավանդ որ «դա ոչ Եվրոխորհրդի պահանջ է, ոչ էլ իշխանությունների, այլ զուտ հասարակության պատվեր ու պահանջարկ»:

Արամ Ղարաբեկյանը դեռ հավատում է

Կամերային երաժշտության տան դիմաց կառուցվող զվարճանքի համալիրից առայժմ քանդվել է միայն բիլիարդանոցի տանիքը. քարե շինությունները ամուր կանգնած են, իսկ դրանք քանդելու որոշումը դեռ անհայտ է:

Երեւանի գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանը Արամ Ղարաբեկյանին խոստացել է շենքը չափագրելուց եւ հատակագծի հետ համեմատելուց հետո համապատասխան առաջարկներ անել: «Քաղաքապետարանի պատասխանին երեկ էինք սպասում, սակայն այժմ լուր չկա»: Շաբաթ օրվա բողոք-երթին իր չմասնակցելու պատճառը ոչ թե «SOS Երեւան» շարժումից նահանջելն էր, այլ հարցին ընդհանրական բնապահպանական հնչեղություն տալը: Նա համոզված է, որ ներկա պահին պետք է կոնկրետ հաջողություններ արձանագրել, հետո միայն անցնել ավելի լայն հարցերի:

Ռ. Պ

Հայաստանը չի՞ ճանաչում Կարսի պայմանագիրը

1-ին էջից

Չլուծվող խնդիր՝ Կարսի պայմանագիրը

Թուրք-հայկական հարաբերությունների նորմալացումը որքան էլ ի նպաստ Հայաստանի լինի, այնուամենայնիվ, Թուրքիայի օգտին է նաեւ: Ի դեմ, նորմալացումը պարտադիր դիվանագիտական հարաբերությունների հաստատում չի ենթադրում: Գուցե սկզբնական փուլում որոշ ընդունելի մոտեցում կարելի էր մտածել վաղուց ի վեր օրակարգում գտնվող, բայց ոչ մի կերպ չիրականացող սահմանի բացման մասին: Սակայն նախապայմաններով Երեւանի դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկները մերժող Թուրքիան թուրք-հայկական սահմանն էլ փակ է պահում, պատճառաբանելով, թե «Հայաստանն Անկախության հռչակագրից եւ սահմանադրությունից չի հանում Թուրքիայի նկատմամբ պահանջատիրությանն առնչվող արտահայտությունները», չի ճանաչում «1921 թ. Կարս-Գյումրի պայմանագրով հաստատված սահմանները», չի հրաժարվում «այսպես կոչված ցեղասպանության պնդումներն արտաքին քաղաքականության առաջնահերթությունը դարձնելուց» եւ չի ազատում «Լեռնային Ղարաբաղում զավթած Ադրբեջանի տարածքները»:

Ինչ խոսք, «Միլլիեթի» ապրիլի 22-ի համարում մատնանշված այս պատճառաբանություններին պետք է ըմբռնումով մոտենալ: Դրանով հանդերձ, չի կարելի աչքաթող անել հետեւյալ իրողությունները.

1. Մերձավոր եւ Միջին Արեւելքը հետզհետե խոսքի մեջ ներքաշող քաղաքական զարգացումներն ու այդ զարգացումներին համընթաց Անդրկովկասում թեժացող մրցապայքարն ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ ԵՄ-ի միջեւ վերացնում են ղարաբաղյան հակամարտությունը մոտ ապագայում լուծելու հավանականությունը: Էլ չենք խոսում այն մասին, որ «Թուրքիան, ինչպես այդ մասին «Յուրիեթի» 2004 թ. հունվարի 17-ի համարում նշել էր նախկին արտգործնախարար Իլթեր Թուրքմենը, դիպուկ արտահայտությամբ, իր փորձությունների հիման վրա խաչ գիտի տարածքային եւ ինքնիշխանության խնդիրների հետեւությամբ լուծման անհնարինությունը»:

2. Թուրքիայի նկատմամբ «պահանջատիրական արտահայտություններն» իրականում «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերն» ընդգծող արտահայտություններ են, եւ դրանք տեղ են գտել ոչ թե Հայաստանի սահմանադրության մեջ, այլ Անկախության հռչակագրում: Ի դեմ, հունիսի 23-ին Եվրախորհրդի միջխորհրդարանական վեհաժողովը քննարկել է թուրք խորհրդարանականների նախաձեռնությամբ պատրաստված առաջարկը եւ ձայների մեծամասնությամբ մերժել «հարեւանների հետ առկա սահմանների ճանաչման» ձեւակերպմամբ սահմանադրության նախաբանի վերանայումը պահանջող այդ առաջարկը, պատճառաբանելով, թե «նախաբանում արտացոլված Անկախության հռչակագիրը որեւէ առնչություն չունի Սահմանադրության հետ»:

3. Չնայած Թուրքիայի հակաթեզերին, համատեղ հանձնաժողով ստեղծելու առաջարկներին եւ դիվանագիտական ձեռնարկներին, հետզհետե աճում է «Հայոց ցեղասպանությունը» խորհրդարանի մակարդակով ճանաչող երկրների թիվը: Թերեւս այդ առումով պատահական չէր պատահաբար 3ալըմ Էռալփի 2004 թ. մայիսի 29-ին «Թերջուման» էջերում առած հետեւությունը. «Հայաստանը չի կարող հրաժարվել ցեղասպանության պնդումներից»: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ներկա փուլում, երբ շարունակվում է ճանաչումը, Հայաստանից որոշ նախապայման պահանջել, որ նա «ցեղասպանության պնդումներն այլեւս չդարձնի արտաքին քաղաքականության առաջնահերթությունը», նշանակում է կամա թե ակամա նախադրյալներ ստեղծել նախապայմանի մերժման համար: Ավելին, դրանով արտաքին աշխարհում տպավորություն կստեղծվի, որ Թուրքիայի պահանջը միտումնավոր է:

4. Հայաստանը չի կարող ճանաչել «Կարս-Գյումրի պայմանագրով ընդունված սահմանները», որովհետեւ հայկական սահմանի առնչությամբ շրջանառության մեջ դրված այս «պայմանագիրը» ոչ թե պատմական փաստաթուղթ է, այլ երկու առանձին պայմանագրերը կամայականորեն միացնելու արդյունք: Միաժամանակ, միջազգային տարբեր իրավիճակում, պայմանավորվող կողմերի եւ բովանդակության առումով եւս տարբերվող այս երկու պայմանագրերի որոշած սահմաններն իրարից նույնպես տարբերվում են: Ընդ որում, 1921 թ. հոկտեմբերի 13-ին խորհրդային Հայաստանի հետ ստորագրված Կարսի պայմանագիրը չեղյալ է համարել 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայ հեղափոխական դաշնակցության վարչակազմի ստորագրած Գյումրու պայմանագիրը: Հետեւաբար Կարսի պայմանագիրը չճանաչելը հայերի տեսանկյունից կնշանակի օրակարգային հարց դարձնել Գյումրու պայմանագիրը: Մինչդեռ Կարսի պայմանագրի համաձայն այսօր ավելի քան 29 հազար քառ. կմ կազմող Հայաստանի տարածքը Գյումրու պայմանագրով ընդամենը 10 հազար քառ. կմ էր:

Այս իրողությունները ոչ թե վկայում են Հայաստանի սահմանի առնչությամբ Թուրքիայի պատճառաբանությունների իրավասության մասին, այլ դրանք դարձնում են վիճարկելի: Թերեւս դրանցից ամենավիճարկելին Կարսի պայմանագրին առնչվող պատճառաբանությունն է: Տվյալ դեպքում խնդիրը սոսկ առանձին երկու պայմանագրերի որոշես մեկ պայմանագիր դիտարկելը կամ Հայաստանի համար Կարսի պայմանագիրը չճանաչելու բացասական հետեւանքները չեն, այլ այն, որ պաշտոնական Երեւանը «չճանաչելու» հետեւություններին տեղիք տվող որեւէ քայլ չի կատարել:

Ընդհակառակը, Հայաստանն ամենաբարձր աստիճաններից բազմիցս շեշտել է խորհրդային Հայաստանի իրավաժառանգորդը լինելու հանգամանքը եւ երբեք չի փորձել վերանայել Կարսի պայմանագիրը: Չոքեսք է մոռանալ, որ այս պայմանագրով անդրկովկասյան հանրապետություններն ընդամենը վերահաստատել են 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված ռուս-թուրքական պայմանագիրը: Քանի դեռ Մոսկվայի պայմանագիրը մնում է ուժի մեջ, Կարսի պայմանագիրը չճանաչելու մասին խոսք լինել չի կարող: Այդ առումով ուշագրավ է արտգործնախարար Վարդան Օսկանյանի հայտարարությունը. «Մինչեւ նոր պայմանագրերի ստորագրումն ուժի մեջ են մնալու ԽՍՀՄ-ի ստորագրած բոլոր պայմանագրերը»: Հայ նախարարի այս հայտարարությանը մայիսի 31-ին անդրադարձել է «Զաման» թերթը եւ դա գնահատել Կարսի պայմանագրի առնչությամբ Երեւանից Անկարա հասած «դրական զարգացում»:

Կարսի պայմանագիրը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ դե ֆակտո գործող միակ պայմանագիրն է: «Եթե սահմանի բացումը, ինչպես այդ մասին «Յուրիեթի» 2004 թ. հունվարի 17-ի համարում նշել է Իլթեր Թուրքմենը, իրագործվի 1921 թ. Կարսի պայմանագրի շրջանակներում, ապա կհաստատվի նաեւ Հայաստանի հետ սահմանների փոխադարձ ճանաչումը»:

Սակայն Թուրքիան սահմանը բացելու եւ ուժի մեջ գտնվող Կարսի պայմանագրից բխող պարտավորությունները կատարելու փոխարեն, Հայաստանին մեղադրում է դա չճանաչելու մեջ, որպեսզի սահմանների առնչությամբ իր մտահոգությունները դարձնի թուրք-հայկական հարաբերությունների նորմալացումից խուսափելու միջոց, ընդ որում՝ մոռանալով, որ Կարսի պայմանագիրը, ինչպես մատնանշված է նախաբանում, «ազգերի բարեկամության եւ ժողովուրդների ինքնորոշման» սկզբունքների հիման վրա ստորագրված «Բարեկամության պայմանագիր» է:

Թուրքիան չի բացում իր սահմանները Հայաստանի առջեւ

Հայաստանի առջեւ սահմանները չբացելու Թուրքիայի գործելակերպն անհարիր է խնդրո առարկա պայմանագրի նախաբանում արտահայտված «ազգերի բարեկամության» սկզբունքին, իսկ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների մերժումը, որպես հայ ժողովրդի անկախ պետականության իրավունքի մերժման դրսեւորում, միանգամայն հակասում է «ժողովուրդների ինքնորոշման» սկզբունքին:

Այս պայմաններում Թուրքիան, թեկուզ մասնակի, ինքն է խախտում Կարսի պայմանագիրը, կամ էլ պայմանագիրը չճանաչելու մեջ Հայաստանին մեղադրելիս առաջնորդվում է դրա վերահաստատման առաջադրանքով: Եթե այս մոտեցումը բխում է Կարսի պայմանագրի ժամկետանց լինելու մտահոգությունից, նշենք, որ ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրերի ստորագրման 1921 թվին խորհրդային Ռուսաստանի եւ Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությունները դեռեւս միջազգայնորեն ճանաչված չէին: Այդ իսկ պատճառով էլ Կարսի պայմանագրի 2-րդ հոդվածում հատուկ շեշտվում է. «Թուրքիա հասկացության տակ նկատի են առնվում այն տարածքները, որոնք ներառված են 1920 թ. հունվարի 28-ին Ստամբուլում Օսմանյան մեջլիսի հաստատած «Ազգային ուխտում»:

Հատկանշական է, որ հակառակ Իռաքի եւ Իրանի մաս կազմող Մոսուլի եւ Կոստուրի, որոնք ներառված էին «Ազգային ուխտում», Իգդիրի շրջանն օսմանյան տարածք չլինելու պատճառով ընդգրկված չէր այդ ուխտի սահմաններում: Նկատի առնելով այս հանգամանքը, ակամա հարց է ծագում՝ Թուրքիան Կարսի պայմանագիրը չճանաչելու մեջ մեղադրելով Հայաստանին՝ փորձո՞ւմ է օրինականացնել Մոսուլի առնչությամբ Իրաքին ներկայացրած պահանջները, սահմանային վեճ է ուզում բացել Իրանի եւ Հայաստանի միջեւ, թե՞ նախադրյալներ է ստեղծել, որ Հայաստանը հրաժարվի Իգդիրը ճանաչել Թուրքիայի տարածք:

Պայմանագիրը խախտում է Թուրքիան

Նպատակներն ինչպիսին էլ որ լինեն, Թուրքիան ուղղակի կամ անուղղակի խախտում է Կարսի պայմանագիրը: Նախիջեւանում հովանավորության որոնումները որոշակիություն են հաղորդում այդ խախտումներին: Նախիջեւանում Թուրքիային հովանավորության իրավունք տվող միակ պայմանագիրը 1920 թ. Գյումրու պայմանագիրն է, որը 1921 թ. Կարսի պայմանագրի 1-ին եւ 2-րդ հոդվածներով չեղյալ է համարվել: Հետեւաբար Նախիջեւանում հովանավորության հավակնությունները խախտում են Կարսի պայմանագրի 1-ին եւ 2-րդ հոդվածները: Դրա հետ Թուրքիան Մոսկվայի եւ հատկապես Կարսի պայմանագրերին անդրադառնալիս օրակարգ է մտցնում նաեւ վերջինիս անվավեր ճանաչած Գյումրու պայմանագիրը, ինչը Կարսի պայմանագրի խախտման մեկ այլ դրսեւորում է:

Թեեւ թուրքական պատվիրակությունը Մոսկվայի բանակցություններում բարձրացրել է Նախիջեւանի հարցը, ավելին՝ 1921 թ. մարտի 10-ին Քաղաքական հանձնաժողովի նիստում նույնիսկ նշվել է, որ թուրքական զորքը Նախիջեւան է մտել ժողովրդի հրավերով, հետեւաբար Նախիջեւանը անցել է Թուրքիայի հովանավորության տակ, այնուամենայնիվ, նա պատրաստ է երդում տեսությանը չզիջելու պայմանով հովանավորության իրավունքը փոխանցել Ադրբեջանին: Սակայն ռուսական պատվիրակությունը մերժել է առաջարկն այն պատճառով, որ Նախիջեւանը Թուրքիայի հովանավորության տակ է անցել ipso facto, այսինքն՝ զորքերի ներկայությամբ պայմանավորված անեխիայի հիմունքով:

Մոսկովյան բանակցությունների սղագրության մեջ դրա առնչությամբ նշվում է. «Ռուսական պատվիրակությունն անընդունելի է համարում հովանավորության իրավունքի փոխանցման Թուրքիայի բանաձեւի բնույթ կրող առաջարկը, որովհետեւ Ալեքսանդրապոլի (Գյումրի) պայմանագիրը չի վավերացվել, իսկ թուրքական զորքերին (Նախիջեւանի) բնակչության հրավերն իրավական ձեւակերպում չի ստացել, որ հովանավորության համար հիմք ծառայի»:

Ի դեմ, Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի Նախիջեւանին վերաբերող հոդվածներում առկա են ձեւակերպման տարբերություններ: 1921 թ. Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածում նշվում է. «Կողմերը համաձայն են, որ Նախիջեւանի շրջանը Ադրբեջանի հովանավորության տակ կազմի ինքնավար միավորում՝ պայմանով, որ Ադրբեջանը որեւէ երդում պետությանը չի զիջի հովանավորության իրավունքը»: Մինչդեռ Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածով ընդգծվում է. «Թուրքիայի կառավարությունը խորհրդային Հայաստանի եւ Ադրբեջանի կառավարությունների հետ համաձայնության է գալիս, որ Նախիջեւանի շրջանը պայմանագրի հավելվածում որոշված սահմաններով կազմում է ինքնավար տարածք՝ Ադրբեջանի հովանավորության տակ»:

Ադրբեջանը չի հարգում պայմանագիրը

1921 թ. Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերում Նախիջեւանի առնչությամբ Թուրքիայի հովանավորության իրավունքը հաստատող որեւէ ձեւակերպում տեղ չի գտել: Ավելին, Կարսի պայմանագիրը վերանայում է նաեւ «Նախիջեւանում հովանավորության իրավունքը երդող կողմին չփոխանցելու» դրույթը: Ըստ սահմանադրության, ունիտար պետություն հայտարարված Ադրբեջանը Նախիջեւանին ինքնակամ զրկել է ինքնավարության կարգավիճակից: Կարսի պայմանագրով նախատեսվող այս կարգավիճակի վերացումն Ադրբեջանի կողմից պայմանագրի ակնհայտ խախտման դրսեւորում է:

Եթե խախտումներն ակնհայտ են, ապա Թուրքիան ի՞նչ նպատակ է հետապնդում Հայաստանին ներկայացրած Կարսի պայմանագիրը ճանաչելու մեղադրանքով: Նա դրանով ձգտում է Նախիջեւանում հովանավորության իրավունք ձեռք բերելու համար հիմնավորե՞լ դրա առնչությամբ հավակնությունները, թե՞ դրդել Հայաստանին, որ նույն պահանջով դիմի Կարսի պայմանագիրը խախտող Ադրբեջանին: Եթե Թուրքիայի վերոհիշյալ պահանջն իսկապես բխում է սահմաններին առնչվող մտահոգությունից, ապա դա պետք է ներկայացնել Ադրբեջանին, որը ոչ միայն Կարսի պայմանագիրն է խախտում, այլեւ ի լուր աշխարհի հայտարարում է, թե խորհրդային Ադրբեջանի իրավաժառանգորդը չէ: Քանի որ դա չի արվում, ուստի ակամա հարց է ծագում՝ սա ենթադրո՞ւմ է, որ չներկայացվող այս պահանջը, որը պետք է ներկայացված լիներ, Ադրբեջանի դեմ զսպաշաղիկ է:

Երկակի ստանդարտները մշտապես հակասություններ են առաջացնում: Դա հատկապես նկատելի է քաղաքականությունում: Սակայն Թուրքիայի հակասությունը սոսկ վերոհիշյալ պահանջով չի սահմանափակվում: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Կարսի պայմանագրի 15-րդ հոդվածին: Մինչ այս հոդվածը նեռում է շնորհում երկու կողմերի քաղաքացիներին կովկասյան ռազմաճակատում կատարած հանցանքների համար, Թուրքիան շարունակ բարձրացնում է 1917-18 թթ. մահմեդական բնակչության դեմ հայկական զինված խմբավորումների իրագործած «կոտորածների» հարցը:

Այս մոտեցումը որքան էլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու նպատակ հետապնդի, հայերի տեղահանությունն ու բնաջնջումը 1915-16 թթ. իրականացվել են ոչ միայն կովկասյան ռազմաճակատին հարակից վիլայեթներում, այլեւ ողջ Անատոլիայում: Հետեւաբար պայմանագրի 15-րդ հոդվածը չի կարող տարածվել ցեղասպանության վրա: Մանավանդ որ ցեղասպանությունը որպես մարդկության դեմ հանցագործություն իրականացնում են ոչ թե առանձին անհատներն ու խմբավորումները, այլ պետական մեքենան՝ ծրագրված ձեւով: Այսինքն, մոտեցումն ինքնին հակասություն է:

Այդ հակասությունը Հայաստանի շրջափակումն է, որովհետեւ հակառակ շրջափակման Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը կողմերի միջեւ նախատեսում է մարդկանց եւ ապրանքների ազատ ելումուտը, անհրաժեշտ է դարձնում հաղորդակցության ուղիների բացումը: Նույնիսկ կողմերը 1922 թ. հունիսի 9-ին Կարսի պայմանագրի հիման վրա երկաթուղային կոնվենցիա են ստորագրել:

Շրջափակման պայմաններում 17-րդ հոդվածի կիրառումը մի կողմ, հայտնի չէ, թե դա ե՞րբ է կիրառվելու: Չկիրառվող մեկ այլ հոդվածն էր Կարսի պայմանագիրը ստորագրող կողմերի միջեւ արտաքին ներկայացուցչությունների փոխանակմանը վերաբերող 19-րդ հոդվածը: Ըստ որի, Թուրքիան խորհրդային Հայաստանի հետ կնքել է հյուպատոսական կոնվենցիա, ինչի հիման վրա մինչեւ 1923 թվը գործել են Կարսում խորհրդային Հայաստանի ներկայացուցչությունը, Երեւանում եւ Գյումրիում համապատասխանաբար Թուրքիայի դեսպանատունն ու գլխավոր հյուպատոսարանը:

Սա էլ մեկ այլ հակասությունն է, որը լրացնում է ղարաբաղյան հակամարտության շահարկումը 1921 թ. Կարսի պայմանագրի միջոցով, այն առումով, որ ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրում որեւէ կերպ չի հիշատակվում Լեռնային Ղարաբաղի մասին:

Թուրք-հայկական սահմանը փակ պահելու համար առաջ քաշված պատճառաբանությունները, դրանց վիճարկելիությունը, Կարսի պայմանագիրը չճանաչելու մեջ Հայաստանին մեղադրելիս Ադրբեջանի կատարած խախտումներն անտեսելը, իսկ մեղադրանքը սահմանների առնչությամբ մտահոգություններով արդարացնելը, անտեսման եւ արդարացման հանգեցնումը երկակի ստանդարտների եւ դրանցից բխող հակասությունները միանգամայն անհրաժեշտ են դարձնում Թուրքիայի, եթե ոչ հայկական քաղաքականության, ապա թուրք-հայկական սահմանի հարցում դիրքորոշման վերանայումը: Քանի որ Կարսի պայմանագրի դրույթները կամա թե ակամա խախտում է նաեւ Թուրքիան, ուստի վերանայման կարիք են զգում խախտման մասին Հայաստանին հասցեագրված մեղադրանքները:

Անգելա Մերկելը մերժում է վարչապետ Էրդողանի հանդիպման առաջարկը

Մինչդեռ Թուրքիան կանգնած է նորընտիր կանցլերի հետ երկխոսության նախադրյալների ստեղծման հրամայականի առջև

Սեպտեմբերի 18-ի ընտրություններում Քրիստոնեա-դեմոկրատական միության հաղթանակը, չնայած չարաբաստիկ կանխատեսումներին, Գերմանիայի առաջին կին կանցլերը դառնալու լայն հնարավորություն է բացել Անգելա Մերկելի առջև: Նա հոկտեմբերի 22-ին Գերհարդ Շրյոդերից կստանձնի կանցլերի պաշտոնը: Այս ամենը ոչ միայն ի չիք են դարձրել Թուրքիայի չարաբաստիկ այդ կանխատեսումներով պայմանավորված հույսերը, այլեւ Եվրոմիությանն անդամակցության բանակցությունների սկզբնավորման ներկա փուլում թուրքական իշխանություններին կանգնեցրել են Մերկելի հետ «երկխոսության նախադրյալներ» ստեղծելու հրամայականի առջեւ:

Հոկտեմբերի 1-ին Բրյուսելից ինտերնետային էջում նախադրյալների ստեղծման հարցին է անդրադարձել «Աբիաբեր» գործակալությունը, տեղեկացնելով, որ «Մերկելը «խաղաղությամբ» մերժեց Էրդողանի հանդիպման առաջարկը»: Ինչպես հայտնի է, Անգելա Մերկելը դեմ է ԵՄ-ին Թուրքիայի լիարժեք անդամակցությանը եւ պնդում է, որ վերջինին տվի «առանձնահատուկ անդամի» կարգավիճակ: Հետեւաբար երկխոսության նախադրյալների ստեղծման վերոհիշյալ հրամայականը բխում է հենց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության նկատմամբ Մերկելի բացասական դիրքորոշումից:

Հակառակ դրան, Գերհարդ Շրյոդերն ամեն կերպ փորձում էր նպաստել, որ Թուրքիան դառնա ԵՄ-ի լիարժեք անդամ: Թերեւս Թուրքիայի նկատմամբ հակասական դիրքորոշումներն էլ դառնում են Մերկելի Քրիստոնեա-դեմոկրատական միության եւ Շրյոդերի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության կոալիցիայի ամենացավոտ հարցերից մեկը: Այս պայմաններում, ինչպես նշում է «Աբիաբեր» գործակալությունը, Շրյոդերը խորհուրդ է տալիս վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանին ընտրություններում տարած հաղթանակի առթիվ Մերկելին «շնորհավորել եւ համոզել»:

Էրդողանը, հետեւելով խորհրդին, թեեւ Մերկելին շնորհավորում է, սակայն չի կարողանում համոզել, որ նա վերանայի Թուրքիայի նկատմամբ իր դիրքորոշումը: Ավելին, Անգելա Մերկելը մերժում է նաեւ Էրդողանի հանդիպման առաջարկը, որն Անկարան, ըստ նշված աղբյուրի, գաղտնի էր պահում:

Պարզվում է, որ նոյեմբերի 6-ին վարչապետ Էրդողանը Եվրոպացի թուրք դեմոկրատների միության բացումը կատարելու համար պատրաստվում է մեկնել Գերմանիա: Քյոլնում կայանալիք բացման արարողությանը Շրյոդերի հետ հրավիրվում է նաեւ Մերկելը: Վերջինս հրաժարվում է մասնակցությունից, որից հետո թուրքական կողմը քրիստոնեա-դեմոկրատների գրասենյակին է հայտնում նոյեմբերի 7-ին Քյոլնից Բեռլին անցնելու եւ տկն Մերկելին այցելելու վարչապետ Էրդողանի ցանկությունը: Պատասխանը սակայն սառը ցնցոտի ներգործություն է ունենում թուրքական կողմի վրա:

Մերկելի գրասենյակը մերժում է նաեւ այցելության Էրդողանի առաջարկը, տալով թուրքական կողմին հետեւյալ պատասխանը. «Տկն Մերկելի ծրագիրը խիստ հագեցած է: Նա բոլորովին ժամանակ չունի: Ուրախ կլինենք, եթե մեծարգո Էրդողանը այցելություն կատարի հետագայում»: Առաջարկի մերժումը դժգոհություն է առաջացնում պաշտոնական Անկարայում: Այսպիսով, Գերմանիայում Էրդողանի ծրագիրը սահմանափակվում է Քյոլնում Գերհարդ Շրյոդերի հետ նախատեսվող ընթրիքով: Մինչդեռ Անգելա Մերկելը Էրդողանի հետ մինչ այդ կայացած հեռախոսազրույցի ընթացքում «մոտ օրերս հանդիպելու» նրա առաջարկին դրականորեն էր արձագանքել, ինչը Բեռլինում երես առ երես հանդիպման առումով քրիստոնեա-դեմոկրատների գրասենյակին դիմելու հարցում ոգեւորել էր թուրքական կողմին:

«Աբիաբերը» ԵՄ-ի լրատվական գործակալության թուրքական ծառայությունն է: Թերեւ պատահական չէ, որ հենց այս ծառայությունն է բացահայտում Գերմանիայի նորընտիր կանցլեր Անգելա Մերկելի հետ հանդիպելու Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի առաջարկի մերժումը: Ինչո՞վ է դա պայմանավորված: Ըստ երեւույթին ԵՄ-Թուրքիա հարաբերություններում առկա լարվածության սոմամբ, որը վերջին օրերին հետզհետե ակնհայտ է դարձել:

Հ. ՅԱՔՈԲՅԱՆ

Բեռլուսկոնի. «Ցիտս կլիներ խուսափել Իրաքի պատերազմից»

Վաշինգտոնում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը եւ Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին քննարկել են Իրաքի դրությունը եւ այնտեղից իտալական զորաբաժնի դուրսբերման հեռանկարը: Հանդիպումն անցել է այն լուրջ բարդությունների առկայությամբ, որոնց բախվում են երկու ղեկավարները իրենց երկրներում:

Լրագրողների համար արված կարճ հայտարարություններում Բուշը եւ Բեռլուսկոնին հավաստիացրել են, թե ամերիկա-իտալական հարաբերություններն անխախտ են: Բուշի խոսքերով, «Իտալիայի եւ ԱՄՆ-ի կարերը շատ ամուր են»: Բեռլուսկոնին իր հերթին «հիացմունք» է արտահայտել նախագահ Բուշի ղեկավարությունից:

Վաշինգտոն մեկնելուց առաջ Բեռլուսկոնին ամերիկացի լրագրողներին տված հարցազրույցում ասել է, թե ինքը 2003 թ. փորձել է Բուշին համոզել պատերազմ չսանձազերծել Իրաքի դեմ: «Ես գտնում եմ, որ ավելի լավ կլիներ խուսափել ռազմական գործողությունից», ընդգծել է Իտալիայի վարչապետը:

Չնայած այս պնդումներին, Իտալիան եղել եւ մնում է Իրաքի պատերազմում ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցներից մեկը: Ինտերֆաքս գործակալությունը նշում է, որ մինչ օրս Իրաքում տեղաբաշխված են 3000-ից ավելի իտալացի զինծառայողներ: Թվակազմով իտալացիները զիջում են միայն ամերիկացիներին եւ բրիտանացիներին:

Իտալա-ամերիկյան հարաբերությունները ներկայումս բավականին լարված են որոշ միջադեպերի, ինչպես նաեւ Իրաքից իտալական զորքը դուրս բերելու՝ վերջերս հաճախակի հնչող պահանջների կապակցությամբ: RFI ռադիոկայանը հիշեցնում է, որ մարտին ամերիկացի զինծառայողները սխալմամբ գնդակահարեցին իտալացի բարձրաստիճան մի հետախույզի, երբ նա ավտոմեքենայով Բաղդադի օդանավակայանից էր մոտենում առեւանգիչներից փրկված իտալուհի լրագրողի հետ: Իսկ վերջերս Միլանի դատախազությունը ԿՀՎ մի խումբ գործակալների մեղադրեց 2003 թ. Իտալիայից եգիպտացի մի իսլամիստի գաղտնի դուրսբերման մեջ:

Սկսվել է Բուշի դեմ մահափորձ պատրաստած ուսանողի դատը

ԱՄՆ-ում սկսվել է սաուդյան ծագումով ամերիկացի այն ուսանողի դատավարությունը, որն ամբաստանվում է նախագահ Ջորջ Բուշի սպանության նպատակով դավադրություն կազմակերպելու մեջ: Խոսքն Օմար Աբու Ալիի մասին է, որին Սաուդյան Արաբիայի իշխանությունները ձերբակալեցին այդ երկրում նրա ուսումնառության ժամանակ:

Ծագումով սաուդցի ուսանողը ոստիկանությանը պատմել է իր դավադիր ծրագրերի մասին, բայց նրա փաստաբաններն ասում են, թե խոստովանությունը կորզվել է կտանջելու միջոցով:

Չնայած այս պնդումներին, երեկ դատավարությունն սկսվել է: BBC-ի տվյալներով, ամերիկացի դաշնային դատախազներն Աբու Ալիին մեղադրում են նաեւ «Ալ Ղաիդային» օժանդակելու մեջ: Եթե նա մեղավոր ճանաչվի, ապա կարող է դատապարտվել ցմահ բանտարկության:

Պ. Ք.

ՄԵՐՅԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Քուրդ առաջնորդ Բարզանիին ընդունել է նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետը

Հոկտեմբերի 26-ին «Ազգը» տեղեկացրել էր Սպիտակ տան Ովալաձեւ դահլիճում Իրաքյան Քրդստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Մասուդ Բարզանիի պաշտոնական ընդունելության մասին, իսկ հոկտեմբերի 28-ին նշել էր, որ Ջորջ Բուշը քուրդ առաջնորդին դիմելիս նախագահ է անվանել նրան: Սա հիմք էր տվել ենթադրելու, որ Սպիտակ տանը Բարզանիին նախագահ Բուշի ցուցաբերած բարձր մակարդակի ընդունելությամբ ստեղծվում են Իրաքի հյուսիսում դե ֆակտո գոյություն ունեցող քրդական պետության դե յուրե ճանաչման նախադրյալներ:

Բարզանին Վաշինգտոն էր այցելել հոկտեմբերի 25-ին, իսկ 31-ին եղել է Լոնդոնում, որտեղ էլ հանդիպել է Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի հետ: Հանդիպմանը Բարզանին նշել է, որ քրդերը 26 միլիոնանոց Իրաքում կազմում են բնակչության 15-20 տոկոսը, եւ հակաիրաքյան պատերազմին մասնակցելու համար իր երախտագիտությունն է հայտնել Անգլիային՝ պատճառաբանելով, թե դրա շնորհիվ քրդերը թոթափելով շիա եւ սունիների արաբների բռնատիրությունը՝ ազատություն են ձեռք բերել:

Այն օրը, երբ Բլերն ընդունել էր Բարզանիին, անգլիական «Թայմս» թերթը հրապարակել է «Քրդերի անկախ պետականության ձգտումներին» վերաբերող հոդվածը՝ մատնացույց անելով Իրաքի մայրաքաղաք Բաղդադից երբիլ ժամանած ուղեւորների համար կիրառվող անցագրային ռեժիմը: Ի դեպ, հոդվածում տրված քարտեզում Հյուսիսային Իրաքը ներկայացված է իբրեւ «Քրդստան»: Հատկանշական է, որ Բարզանիի Վաշինգտոն կատարած այցելության նախօրյակին էլ ամերիկյան «Նյուզուիք» հանդեսը գրել էր քրդերի վերահսկողության տակ գտնվող Հյուսիսային Իրաքում ռազմաբազաներ տեղակայելու ԱՄՆ-ի ծրագրերի մասին:

Հ. Ց.

Սիրիան արաբներին համախմբում է ընդդեմ ՄԱԿ-ի բանաձեւի

Սիրիան արաբական պետություններին կոչ է արել Արաբական լիգայի արտակարգ նիստ գումարել ի պատասխան ՄԱԿ-ի ԱԽ այն բանաձեւի, որով Սիրիայից պահանջվում է «անվերապահորեն գործակցել» Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության հանգամանքները քննող ՄԱԿ-ի հատուկ հանձնախմբի հետ:

Երեկվա համարում «Ազգը» տեղեկացրեց բանաձեւի ընդունման մասին: Ոյթեր գործակալությունը նշում է, որ Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ ալ Շարան «խիստ անարդարացի» է որակել ԱԽ բանաձեւը, որտեղ խոսվում է Հարիրիի սպանությանը սիրիացի բարձրաստիճան հետախույզների մեղսակցության մասին:

Վերջին տեղեկությունների համաձայն, Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսան իր հատուկ ներկայացուցչին Պարսից ծոցի երկրներ է գործուղել արաբական պետությունների գագաթաժողով նախապատրաստելու նպատակով: Դիվանագետները հիշ հավանական են համարում, թե Սիրիային կհաջողվի գագաթաժողովն անցկացնել լրիվ կազմով: Հանդիպմանը մասնակցելու ցանկություն առայժմ հայտնել են միայն Սիրիան, Սաուդյան Արաբիան, Ալժիրը, Լիբանանը եւ Եգիպտոսը:

Սիրիայի փոխարտգործնախարար Վալիդ ալ Մուալեմի խոսքերով, իր երկրի ադեկվատությունը կհանգեցնի ամբողջ տարածաշրջանի անկայունությանը: ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւը սիրիացիներին մասնավորապես պարտավորեցնում է ձերբակալել Հարիրիի սպանությանը մեղսակից անձանց եւ պայմաններ ապահովել ՄԱԿ-ի հատուկ հանձնախմբում նրանց հարցաքննության համար:

Նոյեմբերին ՄԱԿ-ի ԱԽ նախագահը Ռուսաստանն է

Երեկվանից Ռուսաստանը 1 ամսով զբաղեցնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի պաշտոնը: Նյու Յորքում ՌԴ մշտական ներկայացուցիչ Անդրեյ Դենիսովը նոյեմբերին կսահմանի ԱԽ օրակարգը եւ կվարի նիստերը:

ՌԻԱ գործակալությունը նշում է, որ ԱԽ նախագահներն ամեն ամիս փոխվում են անդամ պետությունների ցանկին համապատասխան՝ ըստ լատինական այբուբենի:

ՄԱԿ-ի ԱԽ-ն ունի 5 մշտական եւ 10 ոչ մշտական անդամներ: Վերջիններիս ՄԱԿ-ի ընդհանուր ժողովն ընտրում է 2 տարի ժամկետով: ԱԽ մշտական անդամներն են Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան:

ԱԽ-ն պատասխանատվություն է կրում միջազգային խաղաղության եւ անվտանգության ապահովման համար: Արտաքին հարցերին առնչվող որոշումներն ընդունված են համարվում ԱԽ 15 անդամներից 9-ի դրական քվեների առկայության դեպքում:

Խաղաղության եւ անվտանգության հարցերի առթիվ որոշումների ընդունման համար պահանջվում է 9 քվե, ներառյալ ԱԽ բոլոր 5 մշտական անդամների միահամուռ կարծիքը, այսինքն՝ վետոյի բացակայությունը:

Վրաստանում խորհրդային անձնագրերի գործողության ժամկետը երկարաձգվեց

Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին հրամանագիր է ստորագրել, որով խորհրդային անձնագրերի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչեւ 2006 թ. մարտի 1-ը: Ավելի վաղ որոշված էր այդ անձնագրերն ուժի մեջ թողնել մինչեւ 2005 թ. նոյեմբերի 1-ը:

Արդարադատության նախարարությունում ՌԻԱ գործակալության թղթակցին հայտնել են, հանրապետության բնակիչներից շատերը, որոնց մեծ մասը թոշակառուներ են, դժվարությամբ են հրաժարվում հին՝ խորհրդային անձնագրերից:

Երկրի ներսում Վրաստանի քաղաքացիներն օգտագործում են անձը հաստատող փաստաթուղթ, որը կարելի է անվճար ստանալ ոստիկանության շրջանային բաժանմունքներում: Արտասահման մեկնելու իրավունք ընձեռող անձնագիր ստանալու համար Վրաստանի քաղաքացին պարտավոր է դիմել ԱԳՆ հյուպատոսական վարչություն կամ արդարադատության նախարարություն՝ վճարելով 30 լարի (15 դոլար):

Պ. Ք.

Մշակույթ

Աշնանային մեղեդիների եւ «մթնշաղի անուրջների» հավերժ երգիչը

ՈԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՐԳԵՄ ՀԻՇԱՏԱԿԸ ՔՈ

«Տեյանը մարդկության եւ մարդկայնության բանաստեղծ է, իր խոսքերով ասած՝ «տանջվող ու որբ ադամորդու» հարազատը, նրա ճնչուած, ամոթող, լուսառաս խոսքն ապրում է մարդու մեջ՝ որպես սրտեղանի եւ թալիսման...», 20-րդ դարի հայ գրականության ամենապայծառ հեղինակներից մեկի՝ Վահան Տեյանի եւ նրա ստեղծագործությունների մասին այսպես է արտահայտվել արվեստի մեկ այլ ականավոր ներկայացուցիչ՝ դերասանուհի Մեսրոպյա Սիմոնյանը:

Այս տարի լրանում է սիրո եւ նվիրումի, աշնան թախծալի զգացողությունների հավերժ երգչի ծննդյան 120-ամյակը: Այդ առիթով լույս է ընծայվել ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանի «Ինչպե՞ս երգեմ հիշատակը քո...» գիրքը, որը ներկայացնում է բանաստեղծի կյանքի եւ գործունեության տարեգրությունը, նշանավոր մարդկանց գնահատանքի խոսքը, ժամանակակիցների հուշերն ու բանաստեղծությունները՝ նվիրված Տեյանին, ինչպես նաեւ մեծ ճնարերգուի երգերի եւ նրա մասին հրատարակված գրքերի ու հոդվածների մատենագիտական ցանկը: Ինքնատիպ այս ժողովածուն իր հետաքրքրական եւ ամփոփ տեղեկություններով բավական օգտակար աղբյուր է:

Գրքի առաջին բաժնում հեղինակը ներկայացնում է բանաստեղծի կյանքի տարեգրությունն առավել ակնառու տարեթվերով եւ իրադարձություններով: Ապա «Տեյանն է ասում» հատվածում ներկայացվում են ճնարերգուի կարծիքները, վերլուծությունները զգայական եւ նուրբ հարցերի, անձնական եւ հասարակական գործերի, մարդուն համակող հաճելի եւ սարսափելի հոգեվիճակների շուրջ: «Չէ՞ որ հոգին ինքը երաժշտություն է, միեւնույն է հոգին մեռած է, թե կենդանի: Եվ ինձ թվում է, թե չկա օբյեկտիվ երաժշտություն: Երաժշտությունն իմ հոգին է, որին ինչ-որ հրաշքով ես լսում եմ: Իսկ եթե երաժշտության մեջ ես չեմ լսում իմ հոգին, նշանակում է, որ այդ արդեն երաժշտություն չէ: Ահա թե ինչու երբեմն որեւէ նշանավոր սիմֆոնիա ինձ չի հուզում, իսկ «երգեհոնիկը աշնան եղանակին» խելահան է անում: Շատ եմ մտածել այդ մասին...», Տեյանի այս խոսքերով ավարտվում է գրքի հաջորդ հուզիչ հատվածը:

Ուշագրավ են նաեւ բանաստեղծի մտորումները գրողների, գրականության, թարգմանական գրականության, լեզվի, խոսքի եւ ոճի, ազգի եւ մշակույթի, մարդու եւ փառքի մասին, որոնք ներկայացնում են Տեյան բանաստեղծի մարդկային եւ հոգեկան նրբակերտ հատկանիշներն ու արտումները, կյանքի հանդեպ յուրօրինակ մոտեցումները: «Չէ՞ որ կյանքը ինքը նոթատակ է: Եվ մարդու ամեն մի արարքը պետք է նոթատակ լինի, որովհետեւ դա կյանքի դրսեւորումն է, դա ինքը կյանքն է» կամ «Մարդկանց մեծ մասը մեռնում է՝ մեր ուրտում առանց որեւէ հետք թողնելու. նրանք իրոք մեռնում են», խորհում է Տեյանը:

«Մաքուր զտված լեզվով եւ արծաթի զանգի պես հնչուն՝ մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բաներ բերող» Թումանյանի բնորոշմամբ ներկայացվում է գրքի «Գնահատանքի խոսք եւ հուշեր» հատվածը, ուր մեր մյուս մեծերը գնահատում են Վահան Տեյանի անկեղծ, ճնարական, հարազատ եւ խորապես հուզիչ գրական ժառանգությունը: «Նա չարտագրված բառ չունեցավ: Նա լեզու դրեց հայ գրականության բերանը, բնազդային անորոշ թթիռները, որ անգամ Թումանյանից ճանաչվելուց էին խուսափում, Տեյանից անուն ու նշանակություն առան եւ իրենից հետո եկողի համար արդեն կայուն բառամթերք էին», Տեյանի լեզվի եւ ոճի մասին նշել է գրող Հրանտ Մաթեւոսյանը: Գիրքն ավարտվում է մեծ բանաստեղծին նվիրված ձոներով եւ նրա ստեղծագործությունների մատենագիտական ցանկով:

ԳՈՌԾԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Փարոս» կամերային երգչախմբի հյուրախաղերը Ֆրանսիայում

Աշխարհում իր տեսակի մեջ միակ՝ սայլակավոր հաշմանդամներից կազմված «Փարոս» կամերային երգչախումբը (խմբավար՝ Վաչագան Նավասարդյան) օրերս վերադարձավ Ֆրանսիայից, որտեղ «Ունիսոն» հասարակական կազմակերպության կարմիր խաչ ընկերության նախագահ Մ. Մնացականյանը, Երեւանի քաղաքապետ Ե. Զախարյանը, ԼՂՀ պատգամավորության նախագահ Ս. Օհանյանը, ՀՀ նախագահի 1-ին օգնական Ա. Գեւորգյանը, ակադեմիկոս Թ. Ասաքիանին եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ս. Ամանդան:

հետ մասնակցել էր Բորդոյում «A Hauteur dHomme» ասոցիացիայի կազմակերպած միջազգային համագումարին: Բացի այդ, երգչախումբը հանդես եկավ համերգներով Փարիզում եւ Բորդոյում:

Այս ուղեւորությունը կայացավ «Փարոս» կամերային երգչախմբի գլխավոր հովանավոր՝ Շարուխ-Քուլիանջյան (ԱՄՆ) ընտանիքի օգնությամբ, իսկ ավիատոմսերի ձեռքբերման խնդիրը լուծվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի աջակցության շնորհիվ: Հյուրախաղերի հետ կապված տարբեր հարցերում «Փարոսին» աջակցել են ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանը, ՀՀ մարդու իրավունքների պատգամավոր Լ. Ալավերդյանը, Հայկական պանությունը:

Հոկտեմբերի 12-14 Բորդոյում անցած համաժողովին մասնակցեցին աշխարհի 40 երկրներից 125 պատվիրակներ՝ հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովի շրջանակներում ճնարկվեցին մասնակից երկրներում հաշմանդամների նկատմամբ առկա խտրականության հետ առնչվող հարցեր, ինչպես նաեւ ստեղծվեց «Խորհրդարան առանց սահմանների» միջազգային իրավապատգամավորական կառույցը, որին անդամագրվեց նաեւ «Ունիսոն» ՀԿ-ն:

Համաժողովի ավարտին կայացած համերգում «Փարոսը» հանդես եկավ մի շարք հայ եւ արտասահմանցի հեղինակների երգերի կատարումներով՝ ոչ միայն ծանոթացնելով բազմազգ հանդիսատեսին հայ երգարվեստի վառ նմուշներին, այլեւ ներկայացնելով արեւմտաեվրոպական եւ ռուսական երգչախմբային ստեղծագործությունների սեփական մեկնաբանությունը:

Երգչախմբի Փարիզում կայացած մենահամերգը կազմակերպել էր Սոցիալական օգնության հայկական ասոցիացիան: Այն տեղի ունեցավ հոկտեմբերի 18-ին «Ռոսինի» համերգասրահում: Երկու բաժնից բաղկացած այս համերգին «Փարոսը» փարիզյան նրբաճաշակ հանդիսատեսի համար պատրաստել էր մեծ ծրագիր՝ Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Գ. Սյունիի, Ռ. Ամիրխանյանի եւ այլ հեղինակների լավագույն խմբերգերը: Ունկնդիրներին սպասում էին նաեւ հետաքրքրական անակնկալներ: Այդպիսին էր Թ. Ալթունյանի բեմադրած պարը, որը վարպետորեն կատարեցին Հայաստանի վաստակավոր արտիստ Ռաֆիկ Կարապետյանը եւ պարարվեստի ուսումնարանի նախկին սան Գոհար Ստեփանյանը: Արմեն եւ Ռաստիկ Ալավերդյաններ ամուսնական զույգը կատարեց Կոմիտասի «Կոունկը»՝ Ս. Ասլամազյանի մշակմամբ: Համերգի հաջողության մասին խոսում էին ոչ միայն ունկնդիրների հոսանքայս ծափահարությունները եւ «Բրավո, Փարոս» բացականչությունները, այլ նաեւ հիացմունքի անկեղծ արցունքները Փարիզում բնակվող հայերի աչքերում:

ԼՈՒՍԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Երեւան-Բորդո-Փարիզ-Երեւան

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Գրական-գեղարվեստական երեկույթների շարք Սահակ-Մեսրոպ մշակութային կենտրոնում

Հոկտեմբերի 20-ին Սահակ-Մեսրոպ մշակութային կենտրոնում տեղի է ունեցել «Լույս եւ ճշմարտություն եւ ազատություն» խորագրով գրական-գեղարվեստական երեկույթների շարք, որի ժամանակ, «Յառաջ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, ընթերցվել են Գրիգոր Չալիկյանի հուշերը նվիրված մտերիմ ընկերոջը՝ Պարույր Սեւակին:

Բացառիկ համերգ Փարիզի համազգայինի նախաձեռնությամբ

«Յառաջ» թերթը հայտնում է, որ նոյեմբերի 20-ին Փարիզի համազգային թատրոնի նախաձեռնությամբ քաղաքապետարանի «Ռոսինի» սրահում տեղի կունենա բացառիկ համերգ սոպրանո Աննա Մայիլյանի եւ դաշնակահարուհի Լուսինե Գրիգորյանի մասնակցությամբ: Համերգի ընթացքում ստեղծագործություններ կհնչեն Բախից, Շուբերտից, Հայնեից, Կոմիտասից եւ մյուս դասականներից:

Հայաստանի տաղավարը ներկայացել է Մարսելի միջազգային տոնավաճառում

Միջազգային ներկայացուցչությունների շարքում Համագումարների պալատում արդեն 15-րդ տարին ներկայանում է նաեւ Հայաստանի տաղավարը: Սպասված տոնավաճառն այս տարի տեւել է սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 3-ը, որին այցելել են հազարավոր մարդիկ: Ֆրանսահայ «Յառաջ» օրաթերթի համաձայն, նշված նախաձեռնությունը պատկանում է Մարսելի հայ մշակույթի տան վարչությանը: Տոնավաճառում ներկայացվել են նաեւ հայկական արտադրատեսակներ «Նոյյան», «Նորավանք», «Կոտայք», «Էրեբունի» եւ մյուս ընկերություններից, իսկ սեպտեմբերի 30-ին պաշտոնապես նշվել է Հայաստանի օրը, որին ներկա է եղել մեծ պատվիրակություն ոչ միայն Մարսելից, այլեւ Հայաստանից: Ցուցադրվել են նաեւ Արսեն Արսլանյանի «Սա է Հայաստանը» եւ Արա Գետրգյանի համերգները:

Ցուցադրվեցին նկարչուհի Ասիլվայի գործերը

«Յառաջ» օրաթերթը հայտնում է, որ նկարչուհի Ասիլվան հոկտեմբերի 20-29-ն իր առաջին աշխատանքն է ներկայացրել Փարիզի 16-րդ թաղամասի «Նկարչի» սալոնում, ինչպես նաեւ հոկտեմբերի 21-30-ն աշխատանքներ է ներկայացրել Փարիզի 12-րդ թաղամասի «Աշնան» սալոնում:

Գ. Գ.

100-ամյա գրադարանը դեռ չունի նորակառույց շենք

Դիլիջանի Ղ. Աղայանի անվան գրադարանը երկրի հնագույն գրադարաններից է («Ազգը» տեղեկացրել է գրադարանի պատմությանը 1998 թ. սեպտեմբերի 19-ի համարում): 1974 թ. հանրապետությունում առաջին շենքն էր, որ հարմարեցված էր գրադարանային բոլոր չափանիշներին:

1988 թ. երկրաշարժն իր կործանիչ հետեւանքները թողեց նաեւ գրադարանի վրա, որը ներկայումս էլ վթարային վիճակում է: «Մինչ օրս, նշում է գրադարանի տնօրեն Սիդա Ափոյանը, «տնվորի» կարգավիճակով գոյատեւում ենք մշակույթի պալատում: Արտասրտի սպասում ենք, թե երբ պետք է տեղափոխվենք մեր հիմնական շենքը»:

Վերջերս «Սորոս» հիմնադրամի միջոցով գրադարանը դարձավ հեռահաղորդակցման տարածքային կենտրոն: Այսօր համագործակցում է նաեւ բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի մասնաճյուղի հետ: Կարեւոր է նաեւ համակարգի մուտքը գրադարան, որը հնարավորություն է ընձեռում գրադարանին եւ համայնքին նորովի կազմակերպելու իրենց համագործակցությունը: Չնայած այս ծավալուն աշխատանքներին, կան խոչընդոտներ՝ արխիվի այլ վայրում գտնվելը եւ մեծ ընթերցասրահի բացակայությունը:

Բայց գրադարանը զրկվել է գրքային ֆոնդերը եւ նյութատեխնիկական բազան հարստացնելու հնարավորությունից: Եղած ֆոնդերն էլ հնացել են եւ ենթակա են դուրսգրման: Գրադարանի ընթերցողների թիվն այսօր 8 հազար է, որից 2040-ը 1-9-րդ դասարանների սովորողներ են: Գրքային ֆոնդը կազմում է 160 հազար կտոր գիրք:

Ա. Ափոյանը նշեց, որ գրադարանի վերանորոգման բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններից է կախված, որն էլ պրոբլեմներ է առաջացնում:

ՏԵՂԱՆԵ ՎԱՀԹԵՆՅԱՆ

ԾԱՂՐԱՆԿԱՐՅԻ ԱՅԲԵՐՈՎ

Շախմատային մրցավեճը մեկնարկում է

Իսրայելի Բեեր Շեւա քաղաքում մեկնարկում է շախմատի աշխարհի թիմային 6-րդ առաջնությունը: Այն իր նշանակությամբ շախմատային օլիմպիադայից հետո երկրորդն է: Այս տարի մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի հովանու ներքո, իսկ մրցանակային հիմնադրամն առահովել է Իսրայելում վիճակախաղերի անցկացման ընկերություններից մեկը: Մրցաշարի բացման պատիվը տրվել է Իսրայելի նախագահ Մոշե Կացավին:

Ինչպես միշտ, այս անգամ էլ աշխարհի թիմային առաջնությունը բավական ուժեղ կազմ է հավաքել: Վեսելին Թոփալովի, Վիշվանաթան Անանդի, Պետեր Լեկոյի եւ Մայքլ Ադամսի բացակայությունը բացատրվում է միայն այն բանով, որ նրանց հավաքականներն աշխարհի թիմային առաջնության ուղեգիր չեն նվաճել: Սակայն առանց նրանց էլ մրցաշարի մասնակից 9 հավաքականների կազմերում փիչ չեն հանդիպիս գրոսմայստերները: Այնպես որ, բավական հետաքրքրական ու թեժ մրցապայքար է սպասվում առաջնության պարգեւների համար:

Շախմատասերներին տեղեկացնենք, որ չորս հավաքականներ՝ Ուկրաինան, Ռուսաստանը, Հայաստանը եւ ԱՄՆ-ն առաջնությունում մասնակցելու իրավունք են ստացել շախմատային նախորդ օլիմպիադայի արդյունքների հիման վրա: Իսրայելը մասնակցում է որպես կազմակերպիչ երկիր: Եվս 3 հավաքականներ՝ Կուբան, Վրաստանն ու Չինաստանը ներկայացված են մայրցամաքների առաջնությունների արդյունքները հաշվի առնելով: Չինաստանը ներկայացված է երկու թիմով՝ տղամարդկանց եւ կանանց: Վերջինս նախորդ օլիմպիադայի չեմպիոնն է:

Յուրաքանչյուր հավաքական իրավունք ունի հայտավորելու 6 շախմատիստի, թեեւ նրանցից միայն չորսը կարող են մասնակցել տվյալ տուրի հանդիպումներին: Կկայանա 10 տուր, յուրաքանչյուր տուրում թիմերից մեկն ազատ կլինի: Նոյեմբերի 6-ը հանգստյան օր է, իսկ առաջնության մրցանակակիրները հայտնի կդառնան նոյեմբերի 11-ին:

Հայաստանի հավաքականի կազմում հանդես կգան Լեւոն Արոնյանը (2724), Վլադիմիր Հակոբյանը (2707), Կարեն Ասրյանը (2645), Ռաֆայել Վահանյանը (2614), Սմբատ Լպուտյանը (2614) եւ Աշոտ Անաստասյանը (2596): Մեր հավաքականի մարզիչն է Տիգրան Նալբանդյանը: Նշենք, որ աշխարհի թիմային վերջին առաջնությունում, որը կայացել էր 2001 թ. Երեւանում, Հայաստանի հավաքականը դարձել էր բրոնզե մրցանակակիր: Իսկ չեմպիոնի տիտղոսին արժանացել էր Ուկրաինայի ընտրանին: Ուկրաինացիներն այս անգամ էլ բավական ուժեղ կազմով են ներկայացել մրցաշարին: Թիմի կազմում են Վասիլի Իվանչուկը, Ռուսլան Պոնոմարյովը, աշխարհի ամենաերիտասարդ գրոսմայստեր Սերգեյ Կարյակինը, Անդրեյ Վոլոկիտինը, Ալեքսանդր Մոիսեենկոն ու Պավել Էլյանովը: Հետաքրքրական է, որ բոլորի վարկանիշներն էլ բարձր են 2650-ից:

Ինչպես միշտ, հաղթողի գլխավոր հավակնորդների թվում է Ռուսաստանի ընտրանին, որի կազմում ընդգրկված են Պյոտր Սվիդլերը, Ալեքսանդր Գրիշչուկը, Ալեքսեյ Դրեեւը, Ալեքսանդր Մորոզեւիչը, Ալեքսանդր Մոտիլովն ու Եվգենի Բարեեւը: Մյուս թիմերի առաջատարներն էլ բավական հայտնի եւ ուժեղ շախմատիստներ են: Կուբայի ընտրանին գլխավորում է Լենյեր Դոմինգեսը, Վրաստանինը՝ Զուրաբ Ազմայփարաշվիլին: ԱՄՆ-ի հավաքականում բոլոր շախմատիստներն էլ նախկին ԽՍՀՄ քաղաքացիներ են՝ Ալեքսանդր Գոլդին, Ալեքսանդր Օնիշչուկ, Բորիս Գուլկո, Գրիգորի Կայդանով, Իգոր Նովիկով, Իլդար Իբրահիմով: Նույնը կարելի է ասել նաեւ Իսրայելի թիմի մասին, որի առաջատար խաղակը կազմում են Բորիս Գելֆանդը, Իլյա Սմիրինը, Էմիլ Սուտովսկին եւ Բորիս Ավրուխը:

Առաջին տուրում Հայաստանի հավաքականը կմրցի Իսրայելի ընտրանու հետ: Մեկնարկային տուրում զույգեր են կազմել նաեւ ԱՄՆ-ն ու Վրաստանը, Ռուսաստանն ու Կուբան, Չինաստանի կանանց ու տղամարդկանց հավաքականները:



Տրեզեգեն կրկնեց Պլատինիի ռեկորդը

Իտալիայի առաջնության հերթական տուրում գրավելով «Միլանի» դարպասը, «Յուվենտուսի» ֆրանսիացի հարձակվող Դավիթ Տրեզեգեն թիմի կազմում պատասխանական մրցումներում խփեց իր 104-րդ գոլը եւ կրկնեց հանրահայտ Միշել Պլատինիի ռեկորդը: Հաջորդ գոլը Տրեզեգեին հնարավորություն կընձեռի «Յուվենտուսի» բոլոր տարիների լավագույն ռմբարկուների տասնյակում տեղ գրաղեցնել՝ հավասարվելով թիմի մեկ այլ նախկին լեգենդար ֆուտբոլիստ Զոն Չարլզի ցուցանիշին:

Նշենք, որ Պլատինին «Յուվենտուսում» 1982-1987 թթ. պատասխանական 224 խաղում էր 104 գոլ խփել, իսկ ահա Տրեզեգեին այդ ցուցանիշը կրկնելու համար 176 խաղ անհրաժեշտ եղավ:

«Պլատինիի ռեկորդի կրկնությունն ընթացիկ մրցաշրջանում գլխավոր նպատակներից մեկն էր: Սակայն լավ կլիներ, որ այդ գոլը թիմին հաղթանակ պարգեւեր: Մինչդեռ խփվեց «Միլանի» հետ խաղում, որում պարտվեցինք», նշել է Տրեզեգեն:

Գերմանիան սպասում է ֆուտբոլասերներին

2006 թ. Գերմանիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները կկայանան 12 մարզադաշտերում: Բեռլինում մարզակառույցների վերանորոգման համար կառավարությունը հատկացրել է 195,8 մլն եվրո, 51,1 մլն եվրո էլ ծախսվել է Լայպցիգում մրցադաշտերը ժամանակակից տեսքի բերելու համար: Ընդհանուր առմամբ 32 հավաքականների մասնակցությամբ Գերմանիայում կկայանա 64 հանդիպում: Առաջնությունը կանցկացվի Գերմանիայի նախագահ Հորստ Կելերի հովանու ներքո: Սպասվում է, որ համաշխարհային ֆուտբոլի ստուգատեսը կլուսաբանեն ավելի քան 15 հազար օտարերկրացի եւ մոտ 2 հազար գերմանացի լրագրողներ, մեկնաբաններ ու ֆոտոնկարիչներ: Ընդհանուր առմամբ սպասվում է, որ աշխարհի առաջնության ընթացքում Գերմանիա կժամանեն 3,2 մլն ֆուտբոլասերներ:

Սուպերգավաթը ՀՎԵԴՆԵՐԻՆ

Գերմանիայում ավարտված ձեռքի գնդակի սուպերգավաթի հաղթող ճանաչվեց Շվեդիայի հավաքականը: Հանովերում կայացած եզրափակիչ խաղում շվեդները 29-22 հաշվով հաղթեցին ֆրանսիացիներին: Բրոնզե մեդալների համար պայքարում ռուսները պարտության մատնեցին աշխարհի չեմպիոն խորվաթներին (35-33):

Կուդիշինին մնում է «Չելսիում»

Լոնդոնի «Չելսիի» դարպասապահ Կառլո Կուդիշինին մինչեւ 2006 թ. երկարաձգել է պայմանագիրն ակումբի հետ: Այսպիսով, Պետր Չեխի փոխարինողը վերջ տվեց այն խոսակցություններին, թե իբր պատրաստվում է հեռանալ «Չելսիից»:

«Գոհ եմ, որ «Չելսիի» հետ պայմանագիս ժամկետը երկարաձգեցի եւս մեկ տարով: Իհարկե, չի կարելի ասել, թե պահեստայիններին նստարանին նստելուց գոհ եմ, սակայն երջանիկ եմ, որ հանրահայտ թիմի անդամն եմ: Տխուր կլիներ թիմից հեռանալը: Բացի այդ, առայժմ թիմը զգում է կարիքս», նշել է 32-ամյա դարպասապահը: Նա արդեն 7-րդ մրցաշրջանն է անցկացնում «Չելսիում»: Իտալական «Միլանի» սանը «Բեսիսի» հետ չեմպիոնների լիգայի խաղում պատասխանում էր թիմի դարպասը:

ՖՈՒՏԲՈԼ

Եվրո-2008-ը կմեկնարկի հունիսի 7-ին

Շվեյցարական Նիոնում Եվրո-2008-ի կազմկոմիտեի նիստում հաստատվել է Եվրոպայի հերթական առաջնության եզրափակիչ փուլի խաղացանկը: Ինչպես հայտնի է, եվրոպական ֆուտբոլի հերթական ստուգատեսը կայանալու է Ավստրիայի եւ Շվեյցարիայի խաղադաշտերում: Առաջնության մեկնարկային հանդիպումը տեղի կունենա 2008 թ. հունիսի 7-ին Բազելի «Սանկտ Յակոբ պարկ» մարզադաշտում: Այդ օրն իր անդրանիկ հանդիպումը կանցկացնի Շվեյցարիայի հավաքականը, որն ընդգրկվել է «A» խմբում: Նրա մրցակիցը կլինի վիճակահանության ժամանակ խմբում 2-րդն ընդգրկված հավաքականը: Կազմակերպիչ երկրորդ երկրի՝ Ավստրիայի հավաքականն ընդգրկվել է «B» խմբում: Առաջին հանդիպումը կանցկացվի Վիեննայի մարզադաշտում, հունիսի 8-ին:

Ինչպես Ավստրիայում, այնպես էլ Շվեյցարիայում հանդիպումները կկայանան չորս քաղաքներում: Ավստրիայում Եվրոպայի առաջնության մասնակիցներին կհյուրընկալեն Վիեննան, Զալցբուրգը, Ինսբրուկը եւ Կլագենֆուրտը, Շվեյցարիայում՝ Ցյուրիխը, Բազելը, Ժնեւն ու Բեռնը:

Նախնական փուլում 16 ուժեղագույն հավաքականները վիճակահանությամբ կբաժանվեն չորս խմբի: Խմբային մրցաշարի հանդիպումները կկայանան հունիսի 7-18-ը: Հունիսի 19-22-ը տեղի կունենան քառորդ եզրափակիչ հանդիպումները: Հունիսի 25-26-ին կկայանան կիսաեզրափակիչ մրցախաղերը, իսկ Եվրոպայի նոր չեմպիոնը հայտնի կդառնա հունիսի 29-ին Վիեննայում կայանալիք եզրափակիչ խաղում:

Եվրո-2008-ի ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը տեղի կունենա 2006 թ. հունվարի 27-ին շվեյցարական Մոնտրե քաղաքում: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Հայաստանի ընտրանին նախապես ընդգրկվել է նախավերջին՝ 6-րդ զամբյուղում Վրաստանի, Մակեդոնիայի, Բելառուսի, Հս. Իռլանդիայի, Կիպրոսի եւ Մոլդովայի հավաքականների հետ: Վիճակահանությամբ 50 հավաքականները կբաժանվեն 7 խմբի: 6 խմբերում կընդգրկվեն 7-ական թիմեր, մեկում՝ 8: Խմբերում առաջին երկու տեղերը զբաղեցրած հավաքականները եզրափակիչի ուղեգիր կնվաճեն:

Ցզյուն ռինգ է վերադառնում

Պրոֆեսիոնալ բոքսֆամարտի աշխարհի բազմակի չեմպիոն Կոնստանտին Ցզյուն, որ ներկայում բնակվում է Ավստրալիայում, որոշել է շարունակել ելույթները: Իր հաջորդ մենամարտը նա կանցկացնի 2006 թ.: Նրա մրցակիցը կլինի 66,68 կգ քաշային կարգում աշխարհի բացարձակ չեմպիոն, ամերիկացի Զաբ Զուդան: Ցզյուն կփորձի տիրել չեմպիոնական տիտղոսին, որ ներկայում պատկանում է Զուդային: Հաջորդ շաբաթ Ցզյուն կհանդիպի Զուդայի թիմի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու մենամարտի կազմակերպման հետ կապված բոլոր մանրամասները: Եթե ամեն ինչ բարեհաջող ավարտվի, մենամարտի համար մրցակիցները բավական մեծ գումար կստանան:

Ամռանը բրիտանացի Ռիկի Հատոնից պարտություն կրելուց հետո Կոնստանտին Ցզյուն վճռել էր հեռանալ բոքսֆամարտից: Սակայն այժմ Ցզյուն որոշել է շարունակել ելույթները: Ցզյուն Զուդայի հետ մենամարտել էր 2001 թ., Լաս Վեգասում: Տեխնիկական նոկաուտով հաղթելով 2-րդ ռաունդում, Ցզյուն նվաճել էր աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը:

Քիքբոքսինգի հավաքականը նախապատրաստվում է եվրոպական ստուգատեսին

Քիքբոքսինգի Հայաստանի հավաքականն այս օրերին լրջորեն է նախապատրաստվում նոյեմբերի 8-13-ն Աթենքում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Մարզաձեւի հայ վարպետները որպես կանոն հաջող մրցելույթներ են ունեցել միջազգային մրցաշարերներում՝ տուն վերադառնալով մեդալների հարուստ ավարով: Ուստի Եվրոպայի առաջնությունից էլ մարզիչների ակնկալիքները մեծ են: Աթենքում Հայաստանի մարզական պատվիրակությունը կգլխավորի քիքբոքսինգի ֆեդերացիայի պատվավոր նախագահ Աշոտ Տոնոյանը: Հավաքականի կազմում մրցաշարեզ դուրս կգան 9 մարզիկներ, որոնցից 5-ը կմասնակցեն մեծահասակների, 4-ը՝ պատանիների մրցաշարերին:

Երիտասարդական առաջնությունը նոր մրցակարգով

ՈՒԵՖԱ-ի որոշմամբ փոփոխվել է ֆուտբոլի Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարերի անցկացման կարգը: Ինչպես հայտնի է, Եվրոպայի երիտասարդական հերթական առաջնության եզրափակիչ հանդիպումը կայանալու է 2006 թ. ամռանը, ֆուտբոլի աշխարհի առաջնության մեկնարկից 3 օր առաջ:

2007 թ. Եվրոպայի երիտասարդական առաջնությունը կանցկացվի նոր մրցակարգով: Նախնական փուլում, որի հանդիպումները կանցկացվեն 2006 թ. մարտ-հուլիս ամիսներին, ցածր վարկանիշ ունեցող 18 հավաքականները վիճակահանությամբ զույգեր կկազմեն եւ սեփական ու մրցակցի դաշտերում կայանալիք հանդիպումների արդյունքներով կորոշեն հաջորդ փուլի 9 մասնակիցներին: Այդ խաղերի հաղթողները կմիանան բարձր վարկանիշ ունեցող մյուս 33 հավաքականներին: Արդյունքում 42 ուժեղագույնները վիճակահանությամբ կբաժանվեն 14 խմբի: Խմբային մրցաշարը կանցկացվի մեկ շրջանով, այսինքն՝ յուրաքանչյուր հավաքական խմբում մեկ խաղ կանցկացնի սեփական, մեկ խաղ էլ՝ մրցակցի դաշտում: Փաստորեն, յուրաքանչյուր խմբում կկայանա ընդամենը 3 հանդիպում: Այդ խաղերը կանցկացվեն 2006 թ. օգոստոսի 16-ին, սեպտեմբերի 2-3-ը եւ 5-6-ը:

Խմբերի հաղթողները կրկին վիճակահանությամբ զույգեր կկազմեն եւ հոկտեմբերի 7-8-ն ու 10-11-ը կայանալիք հանդիպումներում կորոշեն Եվրոպայի երիտասարդական առաջնության եզրափակիչ փուլի 7 մասնակիցներին, որոնք կազմակերպիչ երկրի հավաքականի հետ կվիճարկեն չեմպիոնի տիտղոսը: Ի դեպ, կազմակերպիչ երկիրը հայտնի կդառնա այս տարվա դեկտեմբերի 15-ին ՈՒԵՖԱ-ի գործկոմի նիստում: Իսկ Եվրոպայի երիտասարդական առաջնության եզրափակիչ փուլը կանցկացվի 2007 թ. հունիսի 11-24-ը:

Նշենք, որ ՈՒԵՖԱ-ն մտադիր է փոխհատուցել ընտրական մրցաշարի մասնակից թիմերի ծախսերը: Խմբային մրցաշարի մասնակից յուրաքանչյուր երկրի ազգային ֆեդերացիայի կտրվի 100 հազարական շվեյցարական ֆրանկ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ստեղծվել է «Մաշտոց» կրթական հիմնադրամ

Մոնրեալի եգիպտահայերու ընկերակցութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, որ հաստատուած է «Մաշտոց» կրթական հիմնադրամ:

Հիմնադրամը կոչուած է Երեւանի մէջ հոգալու համալսարանական ծախսերը ուսման մէջ յառաջադէմ եւ նիւթական պայմաններ չունեցող հայաստանաբնակ ուսանողներու: Մանրամասնութեանց համար հեռեփլ Երեւանի համալսարանի մէջ «Մաշտոց» կրթական հիմնադրամի ծանուցումներուն:

Ի գիտություն

2005-ին Երեւանի պետական համալսարանի վճարովի ուսման աստվածաբանության, արեւելագիտության (թուրքերեն լեզու), բանասիրական, պատմության ու ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներն ընդունված ուսանողների:

Վերոհիշյալ հաղորդագրության համաձայն, նշված ֆակուլտետներն ընդունված այն ուսանողները, ովքեր նյութապես անապահով են, կարող են դիմել Կանադայում ստեղծված «Մաշտոց» կրթական հիմնադրամին՝ կրթաթոշակառուի կարգավիճակ ստանալու համար:

Այս կապակցությամբ ի գիտություն ներկայացնում ենք հետեւյալը.

1. Այս ուսումնական տարվա համար նշված յուրաքանչյուր ֆակուլտետի համար նախատեսված է միայն մի հատ կրթաթոշակ (հետեւաբար՝ ընդամենը 5 կրթաթոշակ), որի հատկացումը գործողության մեջ դիտի մտնի 2006-ի փետրվարից, երբ արդեն առաջին կիսամյակի բոլոր քննությունները հանձնված են:

2. Կրթաթոշակառուն դիտի որոշվի միայն մրցութային կարգով:

3. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն ուսանողները, ովքեր՝

ա) առաջին կիսամյակի բոլոր քննությունները հանձնած կլինեն բարձր գնահատականներով եւ կունենան օրինակելի վարք,

բ) կներկայացնեն դիմումի հատուկ ձեւ, որը կտրվի թեկնածուին:

Դիմումում նշված բոլոր հարցերին պետք է տալ ճիշտ եւ սպառիչ պատասխաններ: Հակառակ դեպքում դիմումը քննարկման առարկա չի կարող հանդիսանալ:

գ) Մրցույթում հաղթած ուսանողին պետք է տրվի նաեւ առաջին կիսամյակի համար վճարված ուսման վարձը: Ուսման վարձն առձեռն չի տրվում. այն փոխանցվելու է համալսարան վարչությունից, իսկ թոշակառուն պետք է ստանա որոշակի գումար (առձեռն)՝ առօրյա ծախսերը հոգալու համար: Կրթաթոշակը հատկացվելու է ուսման ողջ տեւողության համար, եթե ուսման ընթացքում ուսանողը որեւէ քննությունից ձախողվի եւ ցուցաբերի ուսանողին ոչ վայել վարք, կզրկվի բոլոր արտոնություններից:

դ) Դիմումը կարելի է ներկայացնել ***մինչեւ 2006-ի հունվարի 31-ը:***

Դիմումի ձեւը կարելի է ստանալ նախօրոք՝ այն նախապատրաստելու համար:

ե) Ամեն տարի հինգով ավելացվելու է կրթաթոշակառուների թիվը:

Ընթացիկ հարցերի լուծման համար «Մաշտոց» կրթական հիմնադրամի տնօրենությունն ստեղծել է երեւանյան վարչություն, որի ղեկավար է նշանակվել Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր Նորայր Բեյլերյանը: Աշխատավայրն է՝ ԵՊՀ ֆիզիկական ֆակուլտետի մասնաշենք, առաջին հարկ, ֆիզիկական եւ կոլորիդների ֆիզիայի ամբիոն: Հեռախոսներ՝ 372 (ներքին) եւ 555-172 (քաղաքային):

Կրթաթոշակի հետ կապված ցանկացած հարցով կարող եք դիմել նշված հասցեով:

«ՄԱՇՏՈՑ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-05/31 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«Պետության կարիքների համար ծառայողական համազգեստի ձեռքբերման» նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել, ԲՏԱ Ինվեստբանկ «ԳՈՀԱԿ» ՍՊԸ-ի Հ/Հ 175004670790 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Հ. Այունցին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲՇՁԲ-05/14 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Գործազուրկների եւ հաշմանդամների մասնագիտական ուսուցման ծառայությունների» ձեռքբերման նպատակով** («գորգագործություն»): Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 675.0 ՀՀ դրամ փոխանցել «Էյչ Էս Բի Սի» բանկ Հ/Հ 001-230044-001 «ՓԻԱՐ ԷՅԷՄ» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Ա.Սարգսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող՝ 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16.00-ին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲՇՁԲ-05/15 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Գործազուրկների մասնագիտական ուսուցման ծառայությունների» ձեռքբերման նպատակով** («համակարգչային գործավար, ղեկավարի օգնական-ռեֆերենս», «համակարգչային հաշվապահություն», «համակարգչային դիզայն»): Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 775.0 ՀՀ դրամ փոխանցել «Էյչ Էս Բի Սի» բանկ Հ/Հ 001-230044-001 «ՓԻԱՐ ԷՅԷՄ» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող՝ 10-րդ աշխատանքային օրը, ժամը 17.00-ին:

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA
LOG ON TO www.azg.am

Կենտրոնական բանկի ֆուտբոլային թիմը դարձել է գավաթակիր

Հոկտեմբերի 23-ին մեկնարկել էր «Առողջ ապրելակերպ 2005» ֆուտբոլի առաջին միջբանկային մրցաշարը, որը կազմակերպել էր Արտասահմանյան լրագրողների ընկերակցությունը:

Հոկտեմբերի 29-ին եւ 30-ին կայացան մրցաշարի եզրափակիչ հանդիպումները, որոնց մասնակցում էին Կենտրոնական բանկի, «Կոնվերս», «Անելիք», «Կասկադ», «Առէխիմ», «ITB Միջազգային առեւտրային բանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» եւ «Պրոմեթեա» բանկերի ֆուտբոլային թիմերը: Մրցույթի արդյունքում եզրափակիչ դուրս եկան Կենտրոնական բանկի եւ «Կոնվերս» բանկի թիմերը:

Եզրափակիչ հանդիպման ժամանակ 6:2 հաշվով Կենտրոնական բանկի թիմը հաղթեց «Կոնվերս» բանկի թիմին եւ դարձավ մրցաշարի գավաթակիր:

ԿԲ մամուլի ծառայություն

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը նոյեմբերի 1-ից սահմանվել է տարեկան 16 տոկոս:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ հաշվապահական հաշվառման վարչության ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների հաշվապահական կանոնակարգման եւ հաշվեցվությունների բաժնի պետի թափուր աշխատատեղի համալրման համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն քաղաքացիները, որոնք ունեն

- բարձրագույն տնտեսագիտական/հաշվապահական կրթության պարագայում՝ 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում (վերապատրաստման առկայությամբ)՝ 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների իմացություն, բանկային օրենսդրական եւ նորմատիվային դաշտի տիրապետում, հարկային եւ քաղաքացիական օրենսդրության տիրապետում, կառավարում: Հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ նոյեմբերի 8-ը կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով հետեւյալ փաստաթղթերը.

- դիմում (ձեւը տրվում է ՀՀ կենտրոնական բանկում եւ զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am)
- ինքնակենսագրություն (ռեզյումե)
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (ձեւը տրվում է ՀՀ կենտրոնական բանկում եւ զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am)
- անձնագրի պատճեն
- սոցիալական քարտի պատճեն
- դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեններ
- զինգրքույկի պատճեն (արական սեռի ներկայացուցիչների համար)
- աշխատանքային գրքույկի պատճեն
- երկու գունավոր լուսանկար, 3x4 չափսի

Հեռախոսահամարներ՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին)

ԿԲ մամուլի ծառայություն

ԵԹԳ

Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն

Նոյեմբերի 6-ին, 18-ին, 27-ին

Նոր ներկայացում

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
«ՉԵՋՈՔ ԳՈՏԻ»
(Կինովիպակ 2 գործողությամբ)

Բեմադրությունը՝ Արմեն Խանդիկյանի
Նկարիչ՝ Կարեն Գրիգորյան

Մասնակցում են թատրոնի լավագույն արտիստները:
Բեմադրությունն իրականացվել է ՀՀ կառավարության աջակցությամբ:
Տոմսերը վաճառվում են թատրոնի տոմսարկղում:
Հեռախոս՝ 52-47-23:

Թատրոնի ղեկավար՝
Հայաստանի ժողովրդական արտիստ
ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-63

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 1.11.2005, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: